Հավելված N 23
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 23-ի N 454 -Ն որոշման

# ՊԱՅԹՈՒՑԻԿՆԵՐԻ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Սույն չափորոշիչը սահմանում է ականազերծող կազմակերպությունների կողմից օգտագործվող պայթուցիկների անվտանգ պահեստավորման, տեղափոխման և պահպանման նվազագույն պահանջները:

2. Սույն չափորոշչում «պայթուցիկներ» տերմինն օգտագործվում է թե պայթուցիկների, և թե պայթուցիկ նյութերի համար, եթե այլ բան չի նշված տեքստում:

3. Սույն չափորոշիչը չի վերաբերում կոնկրետ ռումբերի, հրթիռների, արկերին, ՉՔ կամ այլ ծանր պատյանով պայթուցիկներին, թեև չափորոշչի առանձին մասեր վերաբերում են կամ կարող են կիրառվել զինամթերքի պահեստավորման, փոխադրման կամ շահագործման համար:

## I. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Ժամանակակից պայթուցիկներն անվտանգ են, եթե պահեստավորվում, փոխադրվում և շահագործվում են պահպանելով դրանք արտադրողի հրահանգները: Ականազերծող կազմակերպությունները չպետք է օգտագործեն անհայտ ծագման, վաղեմության պայթուցիկներ կամ, երբ դրանց պահեստավորման բնապահպանական պայմանները չեն համապատասխանում արտադրողի պահանջներին:

5. Զինամթերքի և պայթուցիկի համար բնապահպանական պահանջները (ջերմաստիճան, խոնավություն և ցնցումներ) սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

6. Պայթուցիկի պահպանման ընդհանուր պահանջներն են՝

1) պահվեն չոր և լավ օդափոխվող վայրում.

2) պահվեն հնարավորինս սառը վայրում և չենթարկվեն ջերմաստիճանի չափազանց կտրուկ կամ հաճախակի փոփոխությունների.

3) պաշտպանված լինեն արևի ուղիղ ճառագայթներից.

4) չենթարկվեն ուժեղ և մշտական ցնցումների:

7. Զինամթերքի և պայթուցիկի մեջ օգտագործվող որոշ նյութեր կլանում և պահում են խոնավություն, որի արդյունքում կարող է թուլանալ պայթուցիկի գործողությունը: Այն կարող է նաև վտանգավոր դարձնել այդպիսի պայթուցիկի պահպանումը, քանի որ պայթաքուղի և հիմնական մարմնի միջև կարող են առաջանալ զգայուն պայթուցիկ բյուրեղներ:

8. Անձրևը և խոնավությունը կարող են կարճ ժամկետում զգալի վնաս հասցնել զինամթերքին և պայթուցիկներին: Ուստի հարկավոր է հնարավոր ամեն ինչ անել պահեստներում և փոխադրման ընթացքում չոր պայմաններ ստեղծելու համար:

9. Պայթուցիկների լավ օդափոխությունը կօգնի դրանք պահել սառը՝ կանխելով զանգվածի խտացումը (կոնդենսացիա):

10. Սենյակային զինապահեստները չպետք է տեղակայվեն բնակելի շենքում կամ աշխատանքային գրասենյակում:

## II. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

11. Ականազերծող կազմակերպությունները պետք է մշակեն գործառնությունների ստանդարտ ընթացակարգեր (ԳՍԸ), որտեղ նկարագրվում է պայթուցիկների անվտանգ տեղափոխման ընթացակարգը: Վերջինս պետք է նախատեսի հետևյալ պահանջները՝

1) պայթուցիկների անվտանգության ապահովումը.

2) պայթուցիկների տեղափոխումը՝ համաձայն արտադրողների հրահանգների և մասնագրերի ու այլ համապատասխան միջազգային և ազգային չափորոշիչների ու կանոնակարգերի.

3) վթարներից խուսափելը:

12. Ականազերծող կազմակերպությունները, որպես կանոն, չպետք է պայթուցիկները տեղափոխելիս վերցնեն նաև ուղևորներ: Եթե անհրաժեշտ է, որ ուղևորները միևնույն փոխադրամիջոցով տեղափոխվեն, ինչ պայթուցիկ զինամթերքը, ապա հարկավոր է նշանակել տվյալ խմբի համար պատասխանատու ղեկավար, ով պետք է ապահովի ուղևորների անվտանգությունը և հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների կատարումը:

13. Պայթուցիչները և պայթուցիկները չպետք է տեղափոխվեն նույն փոխադրամիջոցով՝ բացառությամբ, եթե պայթուցիչների պահեստավորման կոնտեյները բավարարում է ԱԳԱՄ-ի կողմից սահմանված դիզայնի նվազագույն պահանջները:

14. Պայթուցիկ տեղափոխող բոլոր փոխադրամիջոցներում պետք է լինեն հետևյալ լրացուցիչ սարքավորումները՝

1) երկու 9 լիտր տարողությամբ կրակմարիչներ կամ համանման սարքեր.

2) կոնտեյներ՝ ծխացող նյութեր, լուցկիներ, կրակվառիչներ, ծխախոտ և այլն պահեստավորելու համար:

III. ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

15. Ականազերծող կազմակերպությունները պետք է մշակեն ԳՍԸ-ներ, որտեղ նկարագրված են պայթուցիկների անվտանգ պահպանման ընթացակարգերը: Դրանք պետք է նախատեսեն հետևյալ պահանջները՝

1) պայթուցիկների մուտքը պետք է խստիվ հսկվի.

2) պայթուցիկները պետք է պահպանվեն արտադրողի հրահանգների և մասնագրերի, ինչպես նաև այլ համապատասխան միջազգային և ազգային չափորոշիչների ու կանոնակարգերի համաձայն.

3) միայն համապատասխան ականազերծող ինժեներները կամ անձնակազմը կարող են պահպանել կամ օգտագործել պայթուցիկները:

16. Իներտ, ուսումնական, ցուցադրական կամ մոդելային ականներ և զինամթերք: Ականները և զինամթերքն իրենց բնույթով վտանգավոր են և շատ կարևոր է, որ դրանց պահպանման և տեղափոխման մեջ ներգրավված յուրաքանչյուր մարդ ցուցաբերի ծայրահեղ զգուշավորություն: Ավելի ապահով է օգտագործել իներտ կամ ուսումնական ականներ և զինամթերք՝ ուսուցանելու կամ ցուցադրելու նպատակով, սակայն այստեղ ևս կան որոշակի ռիսկեր:

17. Զինամթերքի և պայթուցիկների անվտանգության պահպանման կարևորագույն նախապայմաններից մեկն այն է, որ մարտական զինամթերքը և ականները հարկավոր է առանձին պահել իներտ, ուսումնական, ցուցադրական կամ մոդելային զինամթերքից և ականներից: Սա ապացուցված սկզբունք է, որի նպատակն ուսուցման կամ վարժանքների ժամանակ վտանգի հավանականությունը նվազագույնի հասցնելն է:

## IV. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

18. Պահեստավորման, տեղափոխման և օգտագործման ժամանակ ականազերծող կազմակերպությունները պետք է նախատեսեն իրենց տրամադրության տակ եղած պայթուցիկների ֆիզիկական անվտանգության համապատասխան աստիճաններ:

19. Հարկավոր է ուշադրություն դարձնել ոչ միայն պահեստի կողմից ապահովվող անմիջական ֆիզիկական անվտանգությանը, այլ նաև հաշվառման և մուտքի հսկողության ընթացակարգերին: Կարող են լինել դեպքեր, երբ կպահանջվեն լրացուցիչ միջոցառումներ, ինչպես օրինակ՝ հատուկ զինված պահակախումբ: Ազգային չափորոշչի ապահովումը նվազագույն պահանջն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 24
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 23-ի N 454 -Ն որոշման

# ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ՄԻՋԱԴԵՊԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Սույն չափորոշիչը սահմանում է ականազերծման միջադեպերի զեկուցման և հետաքննության նվազագույն պահանջները:

2. Սույն չափորոշիչը կիրառելի է միայն ականազերծման տեղանքում ծագած միջադեպերի մասին զեկուցելու և դրանք հետաքննելու նպատակով: Այն չի վերաբերում աշխատանքային տեղամասից դուրս տեղի ունեցած միջադեպերին:

## I. ՄԻՋԱԴԵՊԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՑԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3. Հետևյալ միջադեպերի մասին տեղեկությունները պետք է զեկուցվեն ԱԳԱՄ-ին՝

1) պատահար, որի ժամանակ ականը, պայթուցիկը կամ ՊՊՄ-ն մարմնական վնասվածք է հասցրել աշխատողին, այցելուին կամ համայնքի բնակիչներից որևէ մեկին ականազերծման աշխատանքային տեղամասում.

2) միջադեպ, որի ժամանակ ականը, պայթուցիկը կամ ՊՊՄ-ն վնասել է սարքավորումը կամ գույքն ականազերծման աշխատանքային տեղամասում.

3) ականի կամ ՊՊՄ հայտնաբերում տարածքում, որը նախկինում մաքրվել է ականներից, գրանցվել կամ նշագրվել է որպես ականազերծված՝ անկախ ականի կամ ՊՊՄ-ի վնաս հասցնելու հանգամանքից.

4) երբ գործառնությունների ստանդարտ ընթացակարգերի (ԳՍԸ) կամ գրավոր չափորոշիչների կիրառման, ինչպես նաև աշխատողներին տրված սարքավորումների

խափանման արդյունքում ականազերծման աշխատանքներին մասնակցող աշխատողները, այցելուները կամ տեղի բնակիչները ենթարկվում են անթույլատրելի վտանգի.

5) ականազերծման աշխատանքային տեղամասում ականի, ՊՊՄ-ի կամ պայթուցիկի որևէ չպլանավորված պայթեցման մասին, անկախ այդպիսի միջադեպի պատճառից կամ արդյունքից.

6) ականազերծման աշխատանքային տեղամասում ականի, ՊՊՄ-ի կամ պայթուցիկի հետ չկապված վթարի մասին, որի արդյունքում պահանջվում է տուժածների անհապաղ տեղափոխում մասնագիտացված բուժհաստատություն՝ բուժօգնություն ցուցաբերելու նպատակով: Այսպիսի վթարները կարող են վկայել ընթացակարգերի կամ սարքավորումների թերությունների մասին:

4. Սարքավորումների, չափորոշիչների կամ հաստատված ԳՍԸ-ների թերությունների կամ էլ վտանգի նոր տեսակի առկայության մասին վկայող միջադեպերի վերաբերյալ զեկույցներ ստացող մարմինները պետք է ընդհանուր նախազգուշական հայտարարություն ուղարկեն բոլոր ականազերծող կազմակերպություններին, որոնք կիրառում են նույն սարքավորումները, չափորոշիչները կամ հաստատված ԳՍԸ-ները կամ կարող են հանդիպել նման վտանգների:

5. ԱԳԱՄ-ը կարող է անհրաժեշտ համարել ականների կամ ՊՊՄ-ի հետ կապված միջադեպի հանգամանալից հետաքննության անցկացումը՝ համայնքի վարքագծի վրա տվյալ ռիսկի ազդեցությունը գնահատելու համար: Սա կօգնի ավելի ճիշտ գնահատել ԱՎԻ ուղերձների կամ ծրագրերի նշանակությունը և արդիականությունը:

6. Ականազերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի մասին զեկույցները պետք է կազմվեն երկու ձևաչափով՝ նախնական զեկույց և մանրամասն զեկույց:

7. Ականազերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի մասին նախնական զեկույցը բաղկացած է երկու մասից՝ անհետաձգելի զեկուցում առավել օպերատիվ

միջոցներով, որպես կանոն ռադիոկապի կամ հեռախոսակապի միջոցով, և միջադեպի վերաբերյալ լիարժեք գրավոր տեղեկատվություն՝ ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով:

8. Միջադեպի մասին նախնական զեկույցը ներկայացնում է միջադեպի մասին հիմնական տվյալներ, որը թույլ կտա ԱԳԱՄ-ին արագ արձագանքել, իսկ անհրաժեշտության դեպքում չնախատեսված վտանգի կամ չափորոշիչների, ԳՄԸ-ների կիրառման կամ սարքավորումների շահագործման մասին ընդհանուր նախազգուշական հայտարարություն ուղարկել մյուս ականազերծող կազմակերպություններին:

9. Ականազերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի մասին մանրամասն զեկույցը կազմվում է տվյալ ականազերծող կազմակերպության կողմից անցկացված ներքին հետաքննության արդյունքների հիման վրա: Զեկույցը կազմվում է ներքին հետաքննությունների հարցերով զբաղվող պաշտոնյայի (ՆՀՊ) կողմից, ով սակայն չի կարող լինել միջադեպում անմիջապես ներգրավված անձ:

10. Զեկույցը կազմվում է տվյալ ականազերծող կազմակերպության կողմից՝ միջադեպից հետո հնարավորինս սեղմ ժամկետներում (սովորաբար 10 օրվա ընթացքում):

11. Եթե միջադեպը կապված չէ ականազերծման գործողությունների հետ, ապա մանրամասն զեկույց ներկայացնելու անհրաժեշտությունը կախված կլինի կոնկրետ դեպքից և պետք է որոշվի ԱԳԱՄ-ի կողմից:

## II. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Ականազերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպի պաշտոնական հետաքննության նպատակը ականազերծման գործողությունների անվտանգության և որակի վերաբերյալ խնդիրների կամ դրանց բարելավման հնարավորությունների բացահայտումն է: Դա ոչ քրեական հետաքննություն է, ոչ էլ ապահովագրական փոխհատուցման վճարման ներկա կամ հնարավոր հետագա հայցի գնահատմանն օգնելու նպատակով կատարվող հետաքննություն:

13. Որպես այդպիսին, ականազերծող կազմակերպության բոլոր աշխատողները պետք է ներկայացնեն միջադեպի հանգամանքների վերաբերյալ ամբողջական և ճշգրիտ տեղեկություններ, և հայտնեն հետագա նմանատիպ միջադեպերը կանխելու նպատակով գործող ընթացակարգերը բարելավելու վերաբերյալ իրենց տեսակետները:

14. Ստորև հարցերը պետք է ենթակա լինեն պաշտոնական հետաքննության, որը պետք է անցկացնի համապատասխան որակավորում ունեցող և փորձառու երրորդ կողմը՝

1) ականազերծման միջադեպ, որը հանգեցրել է մարմնական վնասվածքի կամ մահվան.

2) ականազերծման միջադեպ, որը հասցրել է գույքի վնաս.

3) ականազերծման միջադեպ, որի հասցրած վնասը կարող է պատճառ դառնալ համայնքի բնակչի կողմից վնասի փոխհատուցման խոշոր գումարի հայց ներկայացնելու համար.

4) ականազերծման միջադեպ, որի արդյունքում նախկինում ականազերծված, որպես մաքուր տարածք գրանցված կամ նշագրված տարածքում հայտաբերվել է ական կամ ՊՊՄ-ի միավոր.

5) ականազերծման միջադեպ, որի ժամանակ հաստատված չափորոշիչների կիրառման կամ սարքավորումների խափանման արդյունքում ականազերծման աշխատանքներին մասնակցող աշխատողները, այցելուները կամ տեղի բնակիչները ենթարկվում են անթույլատրելի վտանգի.

6) ականազերծման միջադեպ, կապված ականազերծման աշխատանքային տեղամասում ականի, ՊՊՄ-ի կամ պայթուցիկի որևէ չպլանավորված պայթեցման հետ:

## III. ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

15. Ականազերծման ժամանակ տեղի ունեցած միջադեպի պաշտոնական հետաքննությունը կարող է անցկացվել հետևյալ երեք մակարդակներով՝ հետաքննության խորհուրդ (ՀԽ), անկախ հետաքննություն և ներքին հետաքննություն:

16. ՀԽ և անկախ հետաքննությունները նախաձեռնվում են ԱԳԱՄ-ի կողմից, որը սահմանում է իրավասությունների շրջանակը (ԻՇ) և նշանակում է աշխատողներ՝ հետաքննությունն անցկացնելու համար:

17. Ներքին հետաքննությունն անցկացվում է միայն ականազերծման ժամանակ տեղի ունեցած փոքր բնույթի պահատարների համար, և սովորաբար այդպիսի հետաքննությունը միջադեպի մասին մանրամասն զեկույցի կազմումն է: Վերջինս կազմվում է ականազերծող կազմակերպության կողմից՝ հաշվետու բոլոր միջադեպերի համար՝ անկախ ԱԳԱՄ-ի կողմից համապատասխան ցուցումներ ստանալու փաստից:

18. Այն դեպքերում, երբ պահանջվում է ՀԽ կամ անկախ հետաքննություն, պաշտոնական հետաքննությունից առաջ պետք է կազմվի միջադեպի մասին մանրամասն զեկույց, որը կցվում է պաշտոնական հետաքննության մասին զեկույցին:

19. Եթե հանգամանքները պահանջեն, ապա ԱԳԱՄ-ը կարող է ԻՇ սահմանի ականազերծող կազմակերպության համար, որը և կանցկացնի ներքին հետաքննությունը: Այս դեպքում նման ներքին հետաքննությունը կանցկացվի միջադեպի մասին մանրամասն զեկույց կազմելու փոխարեն:

20. Պաշտոնական հետաքննություն սկսող մարմինը պետք է ապահովի հետևյալը՝

1) հետաքննությունը պետք է սկսի հնարավորինս շուտ.

2) հետաքննության անցկացման համար նշանակված անձինք որևէ առնչություն չպետք է ունենան միջադեպի հետ և պետք է ունենան բավարար որակավորում, գիտելիքներ և փորձ.

3) ԻՇ-ի մեկ օրինակը տրամադրում է այն ականազերծող կազմակերպություններին, որոնք կարող են օգնել պաշտոնական հետաքննության ժամանակ, ինչպես նաև առաջարկություններ է ներկայացնում հետաքննվող ականազերծման գործընթացի բարելավման վերաբերյալ.

4) արժեքավոր տեղեկությունների կորուստը կանխելու նպատակով միջադեպի վայրը հնարավորինս երկար ժամանակ փակ է պահում՝ մինչև ՀԽ-ի կամ հետաքննող պաշտոնյայի կողմից թույլատրվում է մուտք գործել տարածք.

5) միջադեպի տեղամասն անմիջապես լուսանկարում է:

21. ՀԽ-ի կազմում պետք է լինեն հակաականային գործողությունների ծրագրի բավարար փորձ ունեցող առնվազն երեք բարձրագույն կամ տեխնիկական գծով ղեկավար պաշտոնյաներ: Հիմնական անդամները պետք է լինեն ԱԳԱՄ/ԱԳԱԿ ներկայացուցիչներ, մեկ անդամ երրորդ կողմ հանդիսացող ականազերծող կազմակերպությունից (օրինակ ԱԳԱԿ-ից կամ ուսումնական կամ այլ կազմակերպությունից) և մեկ անդամ միջադեպում ներգրավված կազմակերպությունից, որը սակայն որևէ անմիջական կապ չունի միջադեպի հետ:

22. Անկախ հետաքննությունը պետք է անցկացվի ԱԳԱՄ/ԱԳԱԿ կողմից նշանակված բավարար փորձ ունեցող անկախ հետաքննիչի կողմից:

23. Ներքին հետաքննությունը պետք է անցկացվի ականազերծող կազմակերպության բավարար փորձ ունեցող մասնագետի կողմից, որը չպետք է որևէ անմիջական կապ ունենա միջադեպի հետ:

## IV. ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ

24. Հետևյալ տեղեկությունները ենթակա են տարածման՝

1) միջադեպի հանգամանքները և դրա արդյունքում հասցված վնասը.

2) հետաքննության ժամանակ հավաքած տեղեկությունների վերլուծությունը.

3) հետաքննության արդյունքները (եզրահանգումներ, առաջարկություններ):

25. ԱԳԱՄ-ը պետք է տեղեկություններ տարածի ականազերծման միջադեպերի մասին:

26. Նոր վտանգների հայտնաբերման դեպքում անհապաղ հարկավոր է դրա մասին տեղեկություններ տարածել:

27. Ականազերծող կազմակերպությունները պետք է՝

1) ժամանակին զեկուցեն ԱԳԱՄ-ին ականազերծման ընթացքում տեղի ունեցած և զեկուցման ենթակա բոլոր միջադեպերի մասին,

2) անմիջապես լուսանկարեն պատահարի վայրը և փակեն վերջինիս մուտքը՝ մինչև այն չստուգվի և մուտք գործելու թույլտվություն չտրվի ՀԽ-ի կամ հետաքննող պաշտոնյայի կողմից.

3) ապահովեն միջադեպը հետաքննող մասնագետների մուտքը դեպի տարածք, իսկ անհրաժեշտության դեպքում տրամադրեն նաև վարչական օգնություն.

4) հետաքննությանը տրամադրեն աշխատանքային տեղամասի մասին բոլոր նախնական փաստաթղթերը, ԳՄԸ-ները, կադրերի ուսուցման վերաբերյալ և այլ անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 25
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 23-ի N 454 -Ն որոշման

# ՀԱԿԱԱԿԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Այս չափորոշիչը սահմանում է հակաականային գործողությունների իրականացման ժամանակ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված նվազագույն միջոցառումներ՝ ապահովելով ականազերծման գործողությունների նվազագույն ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և ականազերծումից հետո այդ հողերի նպատակային օգտագործումը:

2. Սույն չափորոշչով ներկայացված պահանջները հավասարապես կիրառելի են այլ հակաականային գործողությունների, այդ թվում՝ պայթուցիկ զինամթերքի վնասազերծման ժամանակ:

## I. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

3. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը ներառում է՝

1) օդի (աղմուկ, ծուխ), ջրի և հողի աղտոտման նվազեցումը.

2) թունավոր և վտանգավոր թափոնների նվազեցումը և հեռացումը.

3) էներգիայի սպառման կրճատումը.

4) $CO_2$ արտանետումների նվազեցումը.

5) հողի օգտագործումը.

6) ժառանգականության ռիսկ:

## II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Ականազերծման գործողությունները պետք է իրականացվեն առանց վնաս հասցնելու գույքին կամ ենթակառուցվածքներին՝ հնարավորինս նվազեցնելով շրջակա

միջավայրի վրա վերջինիս ազդեցությունը և ապահովելով տեղական համայնքների և ականազերծող անձնակազմի անվտանգությունը:

5. Ականազերծման գործողությունները պլանավորելիս հարկավոր է հաշվի առնել այդ գործողությունների հնարավոր ազդեցությունները, իրականացվելիք միջոցառումները, որոնք թույլ կտան պաշտպանել շրջակա միջավայրը, գույքը կամ ենթակառուցվածքները, ինչպես նաև անձնակազմին հնարավոր վնասները:

6. Ականազերծող կազմակերպությունները պետք է ապահովեն, որ տարածքը որտեղ իրականացվում են ականազերծման գործողությունները վերջինիս ավարտից հետո հնարավոր լինի օգտագործել ըստ նպատակի:

7. Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի կենսաապահովման կամ տնտեսական նպատակներով օգտագործվող գույքին, ենթակառուցվածքներին և հողին՝ ապահովելով ականազերծումից հետո դրանց նպատակային օգտագործումը:

8. <<Ականազերծման ենթարկված հողը>> ներառում է վարչական և օժանդակման նպատակով օգտագործվող տարածքները, ինչպես օրինակ՝ ժամանակավոր ապաստանները (բնակարանները) կամ օժանդակ տարածքները:

## III. ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Ականազերծման ընթացքում օգտագործվող սարքերի աշխատանքը, վերա-նորոգումը, շահագործումը և սպասարկումը պետք է իրականացվի այնպես, որը հնարավորինս նվազեցնի շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցությունը:

10. ԱԳԱՄ-ը պետք է հստակեցնի ներկայացվող պահանջներն այն դեպքերի համար, երբ մեխանիկական գործողությունները ներառում են բուսականության հեռացում կամ իրականացվում են ողողամաշվածքի ենթակա տարածքների վրա՝ սահմանելով այն միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն ականազերծող կազմակերպության կողմից ապահովելով բուսականության հետագա աճը և նվազեցնելով ողողամաշումը:

11. Այսպիսի միջոցառումները կարող են ներառել՝

1) վերացանք կամ վերատունկ (օրինակ՝ խոտ, ծառեր, հողածածկույթ).

2) մշակված հողի վերադարձ ազդեցության ենթարկված տարածքներ (հող, որը ենթարկվել է մեխանիկական մաղման կամ վերականգնման և այլն).

3) քամուց պաշտպանիչ պատնեշների տեղադրում կամ կառուցում.

4) մեխանիկական գործողությունների իրականացում այն ժամանակահատվածում, երբ հողը և բուսականությունը պակաս խոցելի են.

5) համապատասխան սարքերի օգտագործման շնորհիվ ոչ խորը փոսերի փորելը:

12. Մեխանիկական գործողությունների վերաբերյալ համայնքներին իրազեկելը ներառում է գույքի սեփականատերերին և տեղական իշխանություններին գույքի ու ենթակառուցվածքների հնարավոր վնասների մասին խորհրդատվությունը:

13. Անհրաժեշտության դեպքում ականազերծվող տարածքներում գույքի տերերին և վերահսկողներին տեղեկատվություն պետք է տրամադրվի հասցվելիք վնասները նվազագույնի հասցնելու ուղիների վերաբերյալ:

## IV. ՊԱՅԹՈՒՑԻԿ ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ (ՊԶՎ) ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Ականները կամ պատերազմից մնացած պայթուցիկ զինամթերքը (ՊՊՄ) պետք է այնպես վնասազերծվեն, որպեսզի հնարավորինս նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը՝ առանց վտանգի ենթարկելու գույքը և ենթակառուցվածքները:

15. Եթե ականները և ՊԶՎ-ները տեղում պետք է վնասազերծվեն՝ վտանգելով գույքը և ենթակառուցվածները, ապա պետք է պաշտպանական միջոցառումներ իրականացվեն:

16. Նույնիսկ պաշտպանական միջոցառումներ իրականացնելու դեպքում, եթե գույքին և ենթակառուցվածքներին վնաս հասցնելու վտանգը պահպանվում է, ապա ԱԳԱՄ-ը, տեղական

իշխանությունները և համայնքները պետք է գործողությունների վերաբերյալ խորհրդատվություն ստանան:

17. Հարկավոր է ուշադրություն դարձնել նաև շրջակա միջավայրը (ներառյալ բուսականության) բեկորներով, թունավոր կամ վտանգավոր նյութերով աղտոտելուն, և ձեռնարկել միջոցառումներ դրանից խուսափելու կամ աղտոտումը նվազեցնելու նպատակով:

18. Բեկորները կարող են վնասել որպես փայտանյութ օգտագործվող ծառերը կամ կարող են ազդել բերքահավաքի վրա՝ հողում գտնվող սուր բեկորներով վնասելով կենդանիներին և այդ գործընթացում ներգրավված մարդկանց:

19. Եթե հավանականությունը մեծ է, որ հողի ցնցումը կամ աղմուկը կարող են ազդել համայնքի բնակիչների վրա, ապա պետք է միջոցներ ձեռնարկվեն դրանք նվազագույնի հասցնելու ուղղությամբ: Այս միջոցառումները կարող են ներառել՝

1) ականազերծման գործողությունների իրականացում՝ բնակելի տարածքներից հեռու գտնվող վայրերում.

2) յուրաքանչյուր միավորի առանձին ականազերծման սահմանափակում.

3) ձայնը խլացնելու նպատակով փոսերի օգտագործում.

4) պաշտպանական աշխատանքների իրականացում՝ հողի ցնցումները և աղմուկը սահմանափակելու համար.

5) որոշ օդերևութաբանական պայմանների առկայության դեպքում ականազերծման գործողությունների սահմանափակում, օրինակ՝ ցածր ամպերը կարող են մեծացնել աղմուկի ազդեցությունը:

20. ՊԶՎ-ի գործողությունների ավարտից հետո օգտագործված տարածքը ԱԳԱՄ-ի և տեղական իշխանությունների կամ համայնքների պահանջներին համապատասխան պետք է թարմացվի: Թարմացումը ներառում է՝

1) վերականգնում և ջարդոնի (մնացորդի) մեծ կտորների հեռացում.

2) հիմնական ականազերծման գործողությունների արդյունքում գոյացած փոսերի և ռմբափոսերի լցնում.

3) այն տարածքների ցանկապատում և նշագրում, որտեղ հողում հնարավոր է լինեն մնացորդային ոչ պայթուցիկ վտանգավոր մետաղներ:

## V. ԱՆՎՏԱՆԳ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՂՏՈՏՈՒՄԻՑ

21. Անվտանգ տարածքների պահպանումը վտանգավոր աղտոտումից ներառում է՝

1) աշխատանքային տարածքներից ականների կամ ՊԶՎ-ների տեղաշարժի արգելումը, եթե դա նախատեսված չէ ականազերծման կամ այլ լիազորված գործողությունների ծրագրով.

2) աշխատանքային գոտուց տեղափոխվող ցանկացած ականի կամ ՊԶՎ-ի դեպքում մինչև դրանց վնասազերծումը համապատասխան անվտանգության ապահովումը.

3) աշխատանքային տարածքներից տեղափոխված փաթեթավորված նյութի <<Պայթուցիկներից զերծ>> (ՊԶ) և վտանգավոր նյութերի և ուսուցման նպատակով օգտագործվելիք ականների կամ ՊՊՄ-ների մանրակրկիտ ստուգումների ապահովումը.

4) գնահատված վտանգի գոտու հարակից տարածքների մանրակրկիտ մեխանիկական ստուգումը:

22. Բեկորները, գլաքարերը, մետաղալարերը և ցանկացած այլ մնացուկ, որոնք կարող են արգելքներ ստեղծել, պետք է հեռացվեն համաձայն թափոնների (աղբի) կառավարման մասին տեղական կանոնակարգերի և ԱԳԱՄ-ի պահանջների: Անհրաժեշտության դեպքում դրա մասին հարկավոր է տեղեկացնել տեղական համայնքներին:

23. Մաքրված տարածքի շուրջ ցանկապատերի և նշագրերի հեռացումը կամ տեղափոխությունը և դրանց վերացնելը սովորաբար տարբեր գործողություններ են: Այդ երկու գործողություններն ականազերծման պայմանագրով պետք է հստակորեն սահմանազատվեն:

24. Բեկորները, գլաքարերը կամ մետաղալարերն աշխատանքային տեղանքին կից նախապես սահմանված վայր տեղափոխելու դեպքում մինչև տեղափոխելը հարկավոր է

հավաստիանալ, որ տվյալ տեղանքը մաքուր է ականներից և ՊՊՄ-ներից: Եղած բեկորները, գլաքարերը և մետաղալարերը մինչև նոր վայր տեղափոխելը պետք է ամբողջությամբ ստուգվեն հավաստիանալու համար, որ վերջիններս չեն ներառում վտանգավոր բաղադրիչներ:

25. ԱԳԱՄ-ի կամ տեղական իշխանությունների պահանջով տվյալ տեղանքը պետք է նշագրվի և առանձնացվի որպես վտանգավոր թափոնների կուտակման վայր: Հնարավորության դեպքում խրախուսվում է նյութերի վերամշակումը:

## VI. ԹՈՒՆԱՎՈՐ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ

26. Սովորաբար ականներում թունավոր կամ վտանգավոր թափոններ չկան, սակայն եթե դրանց պայթուցիկ պարունակությունը բաց է, ապա դրանց մնացորդները կարող են անցնել հողի և ջրի մեջ, որն իր հերթին կարող է զգալիորեն ազդել շրջակա միջավայրի վրա:

27. Բացի դրանից՝ նետվող զինամքերքը և պայթուցիկ համակարգերը կարող են պարունակել ազբեստ և հրթիռային հեղուկ վառելիք: Կարող են հանդիպել նաև քիմիական զենքեր, այդ թվում՝ քլոր և իպրիտ (մանանեխային գազ) պարունակող զինամթերք, ինչպես նաև դատարկված ուրանային արկեր:

28. Թունավոր և վտանգավոր թափոնների այլ օրինակ կարող են հանդիսանալ՝

1) բռնկվող նյութերը, յուղային թափոնները, քսուքները, վառելիքի զտիչները (ՎԶ).

2) մարտկոցները.

3) բժշկական թափոնները, հին դեղորայքը և այլ քիմիկատներ:

29. Ականազերծման գործողությունների արդյունքում առաջացած ցանկացած թունավոր կամ վտանգավոր նյութ պետք է սահմանված կարգով հեռացվի:

30. Ականազերծման գործողությունների արդյունքում առաջացած թունավոր և վտանգավոր թափոները չպետք է թաղվեն աշխատանքային տարածքում, դրանք պետք է հավաքվեն և տեղափոխվեն դրանց համար նախատեսված հատուկ վայր:

31. Թունավոր և վտանգավոր թափոնները պետք է պահվեն այդ նպատակների համար նախատեսված հերմետիկ կոնտեյներների մեջ:

32. Օգտագործված մարտկոցները կարող են հավաքվել մինչև մեկ տարվա ընթացքում՝ նախքան տարածքից դրանք հեռացնելը՝ վերամշակման կամ ոչնչացման նպատակով:

## VII. ՋՐԱՅԻՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ԽՑԱՆՈՒՄԸ

33. Ականազերծող կազմակերպությունները չպետք է խցանեն կամ փոխեն ջրային բնական հոսանքները, եթե առանց այդպիսի խցանման կամ հոսանքի հունը փոխելու հնարավոր չէ իրականացնել ականազերծման աշխատանքները: Նման անհրաժեշտության դեպքում հարկավոր է խորհրդակցել հողերի սեփականատերերի կամ համայնքի ղեկավարության հետ և ձեռք բերել նրանց համաձայնությունը նախքան աշխատանքներն սկսելը:

## VIII. ՕԴԻ ՈՐԱԿԻ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄԸ

34. Գործողություններն իրականացնելիս ականազերծող կազմակերպությունները պետք է քաջատեղյակ լինեն տեղական համայնքների դիրքին, տարածքում քամու ուղղությանը, ինչպես նաև քամու կողմից ծուխը, փոշին և թունավոր արտանետումները համայնքների ուղղությամբ քշելու հավանականությանը: Ականազերծող կազմակերպությունները պետք է հնարավորինս նվազեցնեն տեղական համայնքների վրա օդի որակի վատթարացման բացասական ազդեցությունը:

35. Բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր է օդի որակի վատթարացման ազդեցություն տեղական համայնքների վրա, ականազերծող կազմակերպությունները պետք է տեղական համայնքներին և իշխանություններին տեղեկացնեն օդի որակի վատթարացման ծավալի, մասշտաբի, տևողության, ինչպես նաև հնարավոր տարահանման մասին:

## IX. ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՅՐՈՒՄԸ

36. Հարկավոր է խուսափել բուսականությունն այրելուց, այնուամենայնիվ, եթե դրա անհրաժեշտությունը կա, ապա հնարավորության դեպքում պետք է իրականացնել հետևյալ վերահսկիչ միջոցառումները՝

1) բուսականությունն այրելու պլանները պետք է քննարկվեն հողատերերի և տեղական իշխանությունների հետ.

2) հողօգտագործողներին և տեղական իշխանություններին տեղեկացնել ականների/ՊՊՄ տեսակների և դրանց հնարավոր վտանգի մասին (բեկորներ, ցնցումներ, թունավոր նյութեր, ծուխ և այլն), որը կարող է առաջանալ բուսականության այրումից.

3) թափոնները չպետք է այրել գիշերը կամ թողնել, որ դրանք այրվեն գիշերվա ընթացքում.

4) այրումը չի կարելի սկսել առանց տվյալ տեղանքում վերահսկման նպատակով համապատասխան անձնակազմի և հրդեհը մարող սարքերի առկայության.

5) մինչև այրման գործընթացն սկսելը հարկավոր է հաշվի առնել քամու և խոնավության հետ կապված իրավիճակը.

6) այրման գործընթացում ներգրավված ամբողջ անձնակազմը պետք է տեղեկացված լինի այրման պլանի մասին՝ ներառյալ բոլոր անվտանգության միջոցառումները.

7) այրման ուղղությունը որոշելիս՝ թե այրումը վերահսկելու, և թե տեղական համայնքների վրա ծխի և մոխրի ազդեցությունը նվազեցնելու նպատակով, հարկավոր է հաշվի առնել քամու ուղղությունը.

8) վերահսկման նպատակով այրվող գոտու ամբողջ շրջագծով պետք է ապահովել մուտքի տարածքներ.

9) այրումը պետք է կատարվի դեպի հրդեհի բնական արգելքները՝ ճանապարհները, արահետներ և այլն: Սակայն եթե դա հնարավոր չէ և այրման ենթակա տարածքի շրջագիծը

պատված է բուսականությամբ, վերջինս հարկավոր է խոնավեցնել նախքան այրումը և շրջագծի շուրջ կանգնած հրշեջ սարքավորումներով զինված անձնակազմը պետք է հսկի իրավիճակը:

## X. ՋԻՆԱՊԱՇԱՐՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

37. Ջինապաշարների ոչնչացումը պետք է պլանավորվի և իրականացվի այնպես, որ նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը: Եթե ԱԳԱՄ-ն անհրաժեշտ համարի, ապա կարող է իրականացվել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ):

## XI. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԸ և ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

38. Աշխատանքային տեղամասի և ժամանակավոր կառույցների ընտրության և տեղակայման ժամանակ հարկավոր է հաշվի առնել շրջակա միջավայրի պաշտպանությունը:

39. Աշխատանքային տեղամասերը և ժամանակավոր կառույցները պետք է կառուցվեն բացառելով հողի և ջրային (այդ թվում՝ ստորջրյա) համակարգի աղտոտումը, ինչպես նաև բնության և կենդանական աշխարհի վրա ազդեցությունը: Անհրաժեշտության դեպքում հարկավոր է կառուցել ժամանակավոր կառույցներ՝ համաձայնեցնելով համայնքի հետ, որպեսզի այդ կառույցները հակառակ ազդեցություն չթողնեն տեղական պայմանների, տնտեսական գործունեության կամ սոցիալ-մշակութային արժեքների վրա:

## XII. ՋՈՒԳԱՐԱՆՆԵՐԸ

40. Արտաթորանքը չպետք է թափվի ջրային հոսանքների մեջ կամ հողի մակերեսին: Հնարավորության դեպքում, ականազերծման բոլոր տեղամասերում և ժամանակավոր կառույցներում հարկավոր է կառուցել ժամանակավոր զուգարաններ: Դրանցում պետք է հարմարեցված լինեն կախովի ջրային բաքեր, որոնք կեղտաջրերը

կմղեն կոյուղի-տանկերներ՝ հետագա ոչնչացման համար, կամ միացված լինեն սեպտիկ տանկերների և անվտանգ կեղտահեռացման համակարգին:

41. Այն դեպքերում, երբ օգտագործվում են զուգարաններ, հարկավոր է նախատեսել մեկ զուգարան՝ յուրաքանչյուր 20 մարդու համար: Դրանք պետք է տեղադրված լինեն կառույցների կամ սննդի պատրաստման տարածքներից առնվազն 6 մետր հեռավորության վրա և ջրային հոսանքներից կամ հորերից 20 մետր հեռավորության վրա:

42. Բոլոր զուգարանները պետք է կառուցվեն այնպես, որ չաղտոտեն տվյալ տարածքի ջրամատակարարման համակարգերը:

43. Ոչ խորը զուգարանահորերը (մի քանի օրվա համար նախատեսված) պետք է ունենան առնվազն 30 x 75 սմ լայնություն և 1-1.5 մ խորություն: Խորը զուգարանահորերը (մի քանի ամսվա համար նախատեսված) պետք է ունենան առնվազն 2 - 2.75 մ խորություն: Լցվելու դեպքում պետք է առնվազն 0.5մ հողե շերտով ծածկել փոսը:

## XIII. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԸ

44. Տեղամասից հավաքված աղբը պետք է ոչնչացվի դրա համար նախատեսված աղբավայրերում: Ականազերծման ժամանակ թափված աղբը պետք է մաքրվի: Աղբը կարող է հողում թաղվել միայն տեղական համայնքի/իշխանությունների թույլտվության դեպքում և փոխադարձաբար համաձայնեցված վայրերում:

45. Աղբափոսերը պետք է փորվեն ջրային հոսանքներից կամ հորերից հեռու գտնվող վայրերում և պետք է այնպես կառուցվեն, որ չաղտոտեն ստորգետնյա ջրերը: Աղբափոսի հատակը պետք է լինի առնվազն 2 մ ստորգետնյա ջրերի մակարդակից բարձր: Աղբափոսը պետք է այնքան խորը լինի, որպեսզի հնարավոր լինի լցվելու դեպքում այն ծածկել 1 մ խորությամբ հողի շերտով:

46. Հարկավոր է ուշադիր լինել որպեսզի հողում չթաղվեն վտանգավոր աղբի տեսակներ (նավթամթերք, վտանգավոր մետաղներ և այլն):

## XIV. ԿԵՂՏԱՋՐԵՐԸ

47. Լողանալու, լվացվելու կամ խոհանոցի տարածքի աշխատանքների արդյունքում գոյացած կեղտաջրերը պետք է լցվեն ներծծվող փոսեր, որոնք պետք է բավական մեծ լինեն՝ կեղտաջրերի ամբողջ ծավալը պահելու համար: Ներծծող փոսերը պետք է ունենան առնվազն 75սմ x 75սմ լայնություն և 1մ խորություն: Կեղտաջրերը չպետք է թափվեն հողի բաց մակերեսին կամ ջրային հոսանքների մեջ:

## XV. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

48. Կենցաղային ջրամատակարարումը պետք է կազմակերպվի այնպես, որ չխանգարի համայնքի ջրամատակարարմանը: Հակառակ դեպքում հարկավոր է խորհրդակցել համայնքի բնակիչների հետ և համաձայնեցնել ջրամատակարարման փոփոխված կարգը:

## XVI. ՎԱՌԵԼԻՔԻ, ՆԱՎԹԻ ԵՎ ՔՍԱՅՈՒՂԵՐԻ (ՎՔՆ) ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

49. Ականազերծող կազմակերպությունները պետք է ապահովեն, որ աշխատանքի ընթացքում կիրառվեն համապատասխան կարգեր, որոնց համաձայն ՎՔՆ-ի արտահոսքն անմիջապես պետք է մաքրվի: ՎՔՆ-ի թափվելու արդյունքում աղտոտված նյութերը պետք է հավաքվեն և ոչնչացվեն հսկվող աղբավայրում կամ այդ նպատակի համար հատկացված և ԱԳԱՄ-ի կողմից թույլատրված վայրում, որտեղ հնարավոր է կանխել հողի մեջ ՎՔՆ-ի արտահոսքը:

50. Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է կառուցել վառելիքի պահեստներ, հարկավոր է ստանձնել կանխարգելիչ քայլեր և ապահովել ՎՔՆ-ի անվտանգ և ապահով պահպանումն ու թույլ չտալ, որ այն աղտոտի հողը կամ ստորգետնյա ջրերը: Կանխարգելիչ քայլերից են՝

1) վառելիքի պահեստը պետք է գտնվի ջրային հոսանքներից առնվազն 30 մ հեռու.

2) պահեստավորման համար օգտագործվող բոլոր բաքերը, կոնտեյներները և վառելիքի հեռացման սարքավորումները պետք է անցնեն կանոնավոր տեխնիկական սպասարկում և զննում՝ երաշխավորելու համար արտահոսքի բացակայությունը.

3) փոխադրամիջոցները և սարքավորումները պետք է վառելիքով լցավորվեն հարթ մակերեսի կամ մեծ թավայանման հարթակի վրա, որպեսզի թափված ՎՔՆ-ն մաքրվի և հեռացվի շրջակա միջավայրի համար անվնաս եղանակով:

## XVII. ՊԱՀՊԱՆՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

51. Այն դեպքերում, երբ պահանջվում է փոխադրամիջոցների, մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկում, նորոգում կամ լվացում աշխատանքային տեղամասում, հարկավոր է առանձին տեղ հատկացնել այդ նպատակի համար: Բնապահպանական միջոցառումների թվում են՝

1) կեղտաջրերը չպետք է թափանցեն ջրային հոսանքների մեջ.

2) չորացված նավթամթերքը պետք է հավաքվի որևէ տարայի միջոցով և հեռացվի (ոչնչացվի) շրջակա միջավայրի համար անվնաս եղանակով.

3) տեխնիկական սպասարկման ընթացքում օգտագործված մասերը, կողմնակի նյութերը կամ այլ աղբը (բացի օգտագործված քսայուղերից) պետք է ոչնչացվեն այնպես, ինչպես կենցաղային աղբի դեպքում է:

## XVIII. ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԿԱՏԱՐՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ

52. Ականազերծման աշխատանքների ավարտից հետո բոլոր ժամանակավոր շինությունները, սարքավորումները, ավելացած նյութերը, ցանկապատները (բացառությամբ վտանգավոր տարածքները նշագրող ցանկապատների) և մյուս նմանատիպ առարկաները պետք է հեռացվեն տարածքից:

53. Զուգարանները, ներծծող փոսերը և աղբափոսերը պետք է լցվեն, ծածկվեն հողով և պատվեն մակերեսային շերտով՝ ողողամաշումից խուսափելու և բուսականության բնական աճն ապահովելու համար:

## XIX. ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

54. Բնապահպանական վնաս հասցնելու հավանականություն ունեցող վտանգավոր, թունավոր կամ դյուրավառ նյութերը տեղափոխելիս հարկավոր է ռիսկը նվազագույնին հասցնող կանխարգելիչ միջոցառումներ իրականացնել, այդ թվում՝

1) բոլոր նյութերը տեղափոխել կոնտեյներներով՝ նվազեցնելու կամ կանխելու համար հեղուկի թափվելը կամ արտահոսքը.

2) նյութերն անվտանգ և ապահով կերպով բեռնել տրանսպորտային միջոց.

3) իրականացնել տեղափոխվող նյութերին համապատասխան հակահրդեհային միջոցառումներ.

4) վտանգավոր նյութեր տեղափոխող փոխադրամիջոցները վարել անվտանգ և զգույշ կերպով:

## XX. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՄ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

55. Ականազերծման աշխատանքները կարող են կատարվել պատմական կամ մշակութային արժեք ներկայացնող տարածքներում: Նման դեպքերում ականազերծող կազմակերպությունը պետք է ստանձնի բոլոր հնարավոր քայլերը՝ կանխելու համար այդ տարածքին հասցվող վտանգը:

56. Այսպիսի քայլերից կարող է լինել աշխատանքային տեղամասում հայտնաբերված ականների կամ ՊՊՄ-ի տեղափոխումը ոչնչացման այլ վայր: Եթե դրանց տեղափոխումը վտանգավոր է և հարկավոր է տեղում վնասազերծել, ապա հարկավոր է իրականացնել պաշտպանիչ միջոցառումներ:

57. Եթե ականազերծման ժամանակ հայտնաբերվել է որևէ առարկա, որը կասկածվում է որ իրենից ներկայացնում է պատմամշակութային արժեք, ապա այդ տարածքում աշխատանքները պետք է դադարեցվեն և դեպքի մասին հարկավոր է զեկուցել ԱԳԱՄ-ին:

## XXI. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ

58. Բնապահպանական պատահարների մասին հարկավոր է տեղեկացնել ԱԳԱՄ-ին՝ պատահարից անմիջապես հետո հնարավորինս սեղմ ժամկետներում: Հարկավոր է տեղեկացնել պատահարի հետ կապված բոլոր հանգամանքների, ստանձնած քայլերի, դրանց արդյունքների և շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության մասին:

59. ԱԳԱՄ-ը կարող է հետաքննել ականազերծման ժամանակ պատահած բնապահպանական պատահարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 26
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 23-ի N 454 -Ն որոշման

# ԲԱՑ ԱՅՐՄԱՆ ԵՎ ԲԱՑ ՊԱՅԹԵՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Սույն չափորոշիչը սահմանում է բաց այրման և բաց պայթեցման տեխնիկայի կիրառմամբ լայնածավալ ոչնչացման գործողություններն իրականացնելու սկզբունքներն ու գործընթացները: Այն խորհուրդներ է ներառում ոչնչացման վայրերի դասավորման և գործառնական ստանդարտ ընթացակարգերի (ԳՍԸ) բովանդակության մասին՝ աշխատանքի անվտանգ համակարգ ապահովելու համար:

## I. ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2. Ռազմամթերքի ոչնչացումը պոտենցիալ վտանգներ պարունակող խնդիր է: Ռիսկերը նվազեցվում են ճիշտ գործընթացներ կիրառելու դեպքում: Հակառակ դեպքում լուրջ պատահարի հավանականությունը մեծանում է:

3. Առաջնահերթությունները, որոնք միշտ պետք է պահպանվեն, հետևյալն են՝

1) անվտանգություն՝ անձնակազմի և գույքի անվտանգությունը գերագույն խնդիր է: Եթե մեթոդն անվտանգ չէ, ապա այն չպետք է կիրառվի.

2) ապահովություն՝ և՛ ոչնչացվող պարագաները, և՝ դրանք ոչնչացնելու համար կիրառվող պայթուցիկները գրավում են ահաբեկիչներին և հանցագործներին: ՀՀԱ-ի և դոնոր պայթուցիկների ապահովությունը պետք է միշտ երաշխավորվի.

3) հաշվառում՝ սա կապված է անվտանգության հետ: ՀՀԱ-ների և պայթուցիկների ցանկացած կորստի մասին պետք է անմիջապես զեկուցել և հետաքննել.

4) աշխատանքի արագություն՝ առաջին երեք առաջնահերթությունները երբեք չպետք է անտեսվեն աշխատանքն արագացնելու նպատակով:

## II. ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4. Կան զինամթերքի ոչնչացման տարբեր և մանրամասն գործընթացներ, սակայն որոշ սկզբունքներ վերաբերում են ոչնչացման բոլոր հանձնարարություններին: Դրանք են՝

1) ճանաչիր զինամթերքի տեսակը՝ մանրամասն իմացիր և՝ ոչնչացվող պարագան, և՝ այն ոչնչացնող պայթուցիկը: Եթե այդ երկուսի նախագծային առանձնահատկությունները հայտնի չեն, ապա հնարավոր չի լինի ընտրել ոչնչացման ապահով և արդյունավետ միջոց.

2) հանձնարարությունը պլանավորիր զգուշությամբ՝ մի ավարտիր պլանավորումը նախքան ոչնչացման վայր հասնելը: Վերացման ծրագիրը և գործընթացները նախօրոք մանրամասն մշակիր.

3) ստեղծիր աշխատանքային անվտանգ միջավայր՝ ստեղծիր և պահպանիր աշխատանքային անվտանգ միջավայր՝ ոչնչացնող և այլ աշխատակազմի, գույքի, ընտանի կենդանիների, ավտոմեքենաների և սարքավորումների համար.

4) հստակ ուղղություններ տուր և հետևիր դրանց՝ ոչնչացման վայրն անորոշության կամ թյուրըմբռնումների վայր չէ: Ուղղությունները պետք է հստակ տրվեն և հասկացվեն անձնակազմի ամեն անդամի կողմից.

5) կիրառիր միայն հաստատված մեթոդներ և պահիր անվտանգության բոլոր նախապայմանները.

6) մաքրիր ոչնչացման վայրը նախքան այնտեղից հեռանալը՝ ոչնչացման ոչ մի հանձնարարություն ավարտված չէ, քանի դեռ ոչնչացման վայրը չի մաքրվել բոլոր վտանգավոր նյութերից, աղտոտիչներից և աղբից:

## III. ՈՉՆՉԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

5. Կա ոչնչացման երեք մեթոդ՝

1) պայթեցում.

2) այրում.

3) կիզում:

6. Տվյալ ՀՀԱ-ի համար կիրառվող մեթոդը կախված է իր դիզայնից և պայթուցիկ միջուկի տեսակից, այդ պատճառով ՀՀԱ-ի պայթուցիկ միջուկը հստակ իմանալն առաջին քայլն է դրա ոչնչացման լավագույն մեթոդը որոշելու համար:

7. Պայթեցում: Այս մեթոդը կիրառվում է հզոր պայթուցիկ (ՀՊ) միջուկ պարունակող ՀՀԱ-ների համար: Լայնածավալ ոչնչացումների ժամանակ այլ տիպի պայթուցիկների (ծուխ, պիրոտեխնիկ և արցունքաբեր նյութեր) փոքր քանակներ ևս կարող են ոչնչացվել: Խառը կոյտերում ոչնչացվող այս նյութերի քանակը պետք է կազմի ամբողջ պաշարի մի փոքր տոկոսը:

8. Այրում: Սա սովորաբար կիրառվում է նետվող (փաթեթավորված կամ արձակ), ծխային, պիրոտեխնիկ և արցունքաբեր զինամթերքների համար, սակայն հարմար է նաև որոշ պլաստմասսայե կաղապար ունեցող ՀՀԱ-ների համար: Այն կարող է նաև օգտագործվել որպես պայթեցման այլընտրանքային տարբերակ որոշ պայթուցիկների համար, այն է՝ պայթուցիկ խառնուրդներ, տրինիտրոտոլուոլ (TNT), նիտրոգլիցերինի (NG) վրա հիմնված պայթուցիկների և վառոդի համար (GP), սակայն պայթեցումն ավելի մաքուր մեթոդ է:

9. Կիզում: Սա այրման հատուկ տեսակ է, որը կարելի է թույլ տալ որոշ տիպի փոքր ՀՀԱ-ների դեպքում, որոնք ունեն պայթուցիկ նյութի նվազագույն քանակ:

10. Ոչնչացման վայրը մի տարածք է, որին հավանություն են տվել պայթեցման կամ այրման եղանակով պայթուցիկների և զինամթերքի ոչնչացման համար: Դրանք իրենց հերթին կոչվում են վերացման հողատարածքներ և այրման հողատարածքներ և կարող են տեղա-կայված լինել ոչնչացման վայրի կողքին: Ոչնչացման վայրերն այնպես պետք է տեղաբաշխված լինեն, որ ոչնչացման գործողությունների հետ կապված վտանգները նվազեցվեն մինչև տանելի մակարդակի:

## IV. ՊԱՅԹԵՑՄԱՆ ՎՏԱՆԳՆԵՐ

11. Պայթեցման վտանգներն են՝

1) բոցը և տաքությունը: Այս հետևանքները թեև տեղայնացվում են, այնուամենայնիվ էական են: Բոցը կարող է վնասել աչքերը, սակայն հավանական չէ, որ այդպես կլինի կարմիր բոցի դեպքում, որն առաջանում է պայթեցումներից մեծ մասի ժամանակ: Տաքությունից կարող է հրդեհ առաջանալ, եթե կան այրվող նյութեր, օրինակ՝ չոր խոտ, թփուտներ, ծառեր կամ տորֆաահող.

2) պայթյուն և աղմուկ: Պայթունը կարող է վնասվածքներ առաջացնել այն դեպքում, երբ մարդիկ կամ սարքավորումներո անպաշտպան են և բավականին մոտ են պայթեցման վայրին, որպեսզի վնասվեն: Վնասվածքները և վնասներն ավելի հավանական է, որ կառաջանան պայթեցված պարագաների բեկորներից: Աղմուկը, սակայն, մեծ խնդիր է ներկայացնում: Մոտ գտնվելիս այն կարող է վնասել ականջը, իսկ ավելի մեծ բարձրության դեպքում այն կարող է ունենալ նյարդայնացնող ազդեցություն, որը կարող է դժգոհություններ առաջացնել տեղի համայնքներում.

3) գետնի ցնցումը: Հիմնական ազդեցությունը կլինի պայթեցմանը մոտ կանգնած անձանց և սարքավորումների վրա, թեև ժայռային շերտը կարող է հաճախ փոխանցել ազդեցությունը բավական մեծ տարածություն: Սա ևս մեկ պոտենցիալ անհարմարության և բողոքի առիթ է տեղի համայնքների համար.

4) զինամթերքի բեկորները: Սա ներկայացնում է ամենամեծ վտանգը: Գործնականում «վտանգի տարածքի» չափը որոշվում է այն առավելագույն տարածքից ելնելով, ուր պայթած զինամթերքի հատվածները կարող են թռչել պայթյունից հետո: Ամբողջ անձնակազմը, գույքը և սարքավորումները, որոնք գտնվում են այս տարածքում և պատշաճ կերպով պաշտպանված չեն, ենթակա են վտանգի.

5) թունավոր ծուխ և գազեր:

12. Նշված վտանգները հաղթահարելու համար ոչնչացման տարածքները պետք է ունենան հետևյալ առանձնահատկությունները՝

1) մեկուսացում: Սա ամենակարևոր պահանջն է: Ոչնչացման տարածքները պետք է հնարավորինս հեռու լինեն անձնակազմից և զույքից.

2) հողի կազմը: Հողը պետք է համեմատաբար ազատ լինի քարերից և ժայռերից, ինչպես նաև տորֆահողից, որը կարող է այրվել հողի տակ.

3) երկրորդական կրակի վտանգների բացակայություն: Ոչնչացման վայրերը չպետք է մոտ լինեն խողովակաշարերին, հոսանքի մալուխներին և (կամ) վառելիքի պահեստներին.

4) չպետք է լինեն ռադիո/ռադարային հաղորդիչներ: Մեծ ոչնչացումները սովորաբար սկսվում են կիրառելով էլեկտրական մալուխներ կամ ռադիո հսկիչ համակարգեր (ՌՀ), և որպես այդպիսին, դրանք կարող են ենթարկվել արտաքին էլեկտրամագնիսական ուժերի (ԷՄՈՒ) ազդեցությանը: Հետևաբար, ոչնչացման տարածքները չպետք է մոտ գտնվեն ռադարային սարքերին, ռադիոփոխանցիչներին կամ բարձրավոլտ հոսանքագծերին.

5) բարձրադիր վայրեր: Նշված վայրերը նվազեցնում են պայթյունի ազդեցությունը և գետնի ցնցումը: Դրանք նաև օժանդակում են հողի հեշտ չորացմանը, ինչն օգնում է հորատման աշխատանքներին: Սակայն բարձրադիր վայրերը նաև հակված են մեծացնել պայթեցված պարագաների բեկորների արտանետումների տարածքը:

## V. ԱՅՐՄԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

13. Այրման վտանգներն են՝

1) բարձր տաքությունը.

2) ուժեղ լույսը.

գ) արտանետվող թունավոր գազերը:

14. Այրման վտանգներին դիմակայելու համար այրման տարածքները պետք է ունենան հետևյալ առանձնահատկությունները՝

1) երկրորդական հրդեհի վտանգի բացակայություն.

2) բավարար քանակի ջրամատակարարում.

3) բավարար չափի մեկուսացում՝ տաքությունից կամ ծխից առաջացող պատահարներից խուսափելու համար.

4) ավազոտ հող՝ առանց տորֆային շերտի:

15. Մեկուսացված, ավազոտ, անպտուղ տարածքն ամենահարմար վայրն է, սակայն բարձր ժայռերի մոտ գտնվող տարածքներից պետք է խուսափել, քանի որ վերև բարձրացող տաք օդի հոսանքները կարող են այրվող բեկորները ցրել շատ հեռու:

## VI. ՈՉՆՉԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ (ԳՍԸ) ՎԱՎԵՐԱՑՈՒՄԸ

16. Ոչնչացման վայրերի և դրա հետ կապված ԳՍԸ-ների պաշտոնական վավերացումը (որը սովորաբար կոչվում է արտոնագրում) կատարվում է ազգային իշխանությունների կողմից՝ նախքան վայրում ոչնչացման գործողություններ սկսելը:

17. Բոլոր ԳՍԸ-ները հրատարակված են ավելի բարձր իշխանության կողմից և իրենցից ներկայացնում են դրանց տեղական մեկնաբանությունը: ԳՍԸ-ները պետք է սկսվեն՝ թվարկելով բոլոր այդ կանոնները և դրանց հետ կապված ցանկացած ազգային չափորոշիչ:

18. ԳՍԸ-ները չպետք է վերարտադրեն այլ հրատարակություններում եղած տեղեկություններից մեծ հատվածներ: Ավելի շուտ նրանք պետք է մանրամասնեն, թե այս կանոններն ինչպես պետք է կիրառվեն տեղական պայմաններում:

19. Քարտեզները պետք է ուղարկվեն ազգային իշխանություն՝ ԳՍԸ-ների նախնական տարբերակների հետ մեկտեղ: Դրանք կներառեն՝

1) ընդհանուր տարածքի քարտեզ, որի վրա ոչնչացման վայրի անունն ու տարածքն են մատնանշված՝ տարածքի սահմանների ընդգծմամբ: Սույն տեղեկությունները պետք է կրկնվեն ԳՍԸ-ի հիմնական տեքստում.

2) ոչնչացման վայրի քարտեզի ավելի լայնամասշտաբ ուրվագիծ, որը ցույց է տալիս դրա հատակագիծը:

20. Այս հատակագծային քարտեզը պետք է ներառվի որպես ԳՍԸ-ների հավելված: Ոչնչացման վայրի հատակագիծը պետք է մշակվի՝ ելնելով անվտանգությունից և ազգային իշխանության կողմից հաստատվելուց հետո չպետք է փոփոխվի՝ առանց վերջինիս համաձայնության:

21. Անվտանգության պահակները պետք է տեղաբաշխվեն այնպես, որ կարողանան հսկել դեպի ոչնչացման տարածք տանող բոլոր հնարավոր ճանապարհները: Նրանք սովորաբար տեղակայվում են ոչնչացման տարածքի եզրագծերի մոտ՝ բեկորներից պաշտպանող կացարաններում (ԲՊԿ): Եթե ԲՊԿ-ներ չկան, ապա պահակներին պետք է տեղաբաշխել վտանգի տարածքից դուրս:

22. Ոչնչացման վայրերը պետք է նշագրվեն ցուցապաստառներով, որոնք տեղակայված են վտանգավոր տարածքից դուրս այն բոլոր հատվածներում, որով կարելի է մոտենալ այդ տարածքին: Ցուցապաստառները պետք է նախազգուշացնեն տեղի համայնքներին տարածքի նշանակության, այնտեղ գտնվող նախազգուշական համակարգերի (պահակներ և այլ նախազգուշական համակարգեր), տարածքի հետ կապված վտանգների (և՛ ոչնչացման ընթացքում, և՛ դրանից հետո) և նախազգուշացումներն անտեսելու հնարավոր վտանգների մասին: Ցուցապաստառները պետք է գրվեն հայերենով:

23. Կրակակետի տեղակայում: Սա պետք է բավականին մոտ լինի պայթեցման ցանկացած վայրին, որպեսզի ոչնչացման համար պատասխանատու պաշտոնյան կարողանա լսել մասնակի պայթյունները: Կրակման կետը սովորաբար գտնվում է վտանգի տարածքի ներսում՝ ԲՊԿ-ում:

24. Լավ հաղորդակցությունն անհրաժեշտ պայման է անվտանգության համար: Պետք է ստեղծել հետևյալ հաղորդակցական կապերը նախքան ոչնչացման գործողություններն սկսելը՝

1) կրակման կետի և ցանկացած շտապ օգնության ծառայությունների միջև. օրինակ՝ կրակի, բժշկական կամ ոստիկանական հաղորդակցական կապերը կարող են հաստատվել ավելի բարձր շտաբի կողմից.

2) կրակման վայրի և անվտանգության պահակների միջև: Պետք է նաև լինեն հավելյալ համակարգեր, օրինակ՝ շչակներ, ձայնային ազդանշաններ կամ սուլոցներ: ԳՄԸ-ներում պետք է ներառվեն արտակարգ իրավիճակների/շտապ օգնության բոլոր համարները և նշվեն պատահարների հետ կապված զեկուցման պահանջները:

## VIII. ՊԱՅԹՈՒՑԻԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

25. Սահմանափակումները պայթուցիկների վերաբերյալ պետք է սահմանվեն ոչնչացման յուրաքանչյուր վայրի համար: Պայթուցիկների կիրառման սահմանափակումները որոշվում են երկու հիմնական գործոններով՝

1) բեկորների ցրման առավելագույն հեռավորությունը. սա սահմանում է վտանգի տարածքը, և ամբողջ անձնակազմը կամ սարքերը պետք է գտնվեն կամ այս տարածքից դուրս, կամ ԲՊԿ-ում: Ոչնչացման վայրի շրջանագիծը պետք է ներառի նաև վտանգի տարածքը: Այսպիսով, ոչնչացման տարածքի չափը կորոշի պայթուցիկների սահմանափակումը: Չպետք է թույլ տրվի որևէ բաց պայթեցում, որը ներառում է զուտ պայթուցիկ միջուկ (ԶՊՄ) այն սահմանված չափից ավելի, որի դեպքում բեկորները կարող են թռչել ավելի հեռու, քան ոչնչացման վայրի շրջանագիծը.

2) հողի ցնցումը և աղմուկի ազդեցությունը. պետք է որոշվի ցնցման և աղմուկի ազդեցությանը «դիմանալու» տեղի համայնքների և նրանց գույքի հնարավորությունը: Սա կարող է ստիպել կիրառել ավելի քիչ քանակով պայթուցիկներ, քան ենթադրվում է բեկորների ցրման առավելագույն հեռավորությամբ:

26. Ոչնչացման նոր վայրի համար պայթուցիկների կիրառման սահմանափակումների մեթոդները հետևյալն են՝

1) տեխնիկական խորհրդատվություն ԲԱԲՊ-ի օպերատորների կողմից.

2) ոչնչացման փորձերի իրականացում՝ բեկորներից վտանգի ենթարկման ռիսկ ունեցող տարածքների չափը, ինչպես նաև հողի ցնցման և աղմուկին դիմանալու մակարդակները որոշելու համար: Ոչնչացման վայրի պարագծում և այլ զգայուն վայրերում հարմար ծածկի տակ պետք է տեղակայել կրակակետի հետ հաղորդակցական կապ ունեցող դիտորդներ և իրականացնել մի շարք փորձնական պայթեցումներ՝ ամեն անգամ աստիճանաբար ավելացնելով ԶՊՄ-ների քանակները:

27. Ամեն պայթեցումից հետո պետք է տեղեկանալ դիտորդներից արդյունքների մասին և դադարեցնել, եթե դիտորդները զեկուցում են, որ բեկորներն ընկել են հենց իրենց դիմաց կամ, երբ տեղի համայնքի՝ գործողություններին դիմանալու սահմանն անցել են:

28. Փորձարկման վերջնական արդյունքը պետք է լինի պայթուցիկի սահմանափակումը, որը կերաշխավորի, որ՝

1) ոչնչացման վայրի շրջանագծի վրա կանգնած անպաշտպան անձը ապահով է պայթյունից և բեկորներից: Նրանք պետք է նաև ապահով լինեն թունավոր գազերից՝ անկախ քամու ուղղությունից.

2) մարդկանց կամ գույքը վնասելու հնարավորություն չկա ոչնչացման վայրի շրջանագծից դուրս.

3) հողի ցնցման և աղմուկի ազդեցությունը պահպանվում է տանելի մակարդակի վրա: Այնտեղ, որտեղ նախատեսված է ունենալ ավելի, քան մեկ ոչնչացման գործողություն նույն վայրում, օրինակ՝ այրում, բաց ոչնչացումներ, սպիտակ ֆոսֆորի ոչնչացում կամ պիրոտեխնիկական այրում, ապա յուրաքանչյուր գործողության տեղը պետք է որոշվի և

պայթուցիկների առանձին սահմանափակումներ պետք է հաստատվեն ամեն ենթավայրի համար:

29. Ներկա գտնվող անձանց թիվը պետք է լինի անվտանգության և արդյունավետության համար անհրաժեշտ նվազագույն քանակը: Որոշ հանձնարարություններ ունեն իրենց պարտադիր նվազագույն անձնակազմի թիվը, որը պետք է ներառվի այս հանձնարարությունների համար նախատեսված մանրամասն գործընթացների մեջ:

30. Դիտորդներ կարելի է թույլ տալ միայն պաշտոնական ցուցադրությունների ժամանակ: Դիտորդներից (կամ նրանց կազմակերպություններից) պահանջվում է ստորագրել ստանդարտ ապահովագրական թերթիկ՝ նախքան ցուցադրման սկիզբը:

31. Պահանջներ անվտանգության պահակների համար: Սրանք սովորաբար ներառված են ոչնչացման վայրերի ԳՍԸ-ների հավելվածներում և անդրադառնում են հետևյալ կետերին՝

1) պահանջներ հաղորդակցության վերաբերյալ.

2) պահակների պարտականությունները.

3) պահանջներ զեկուցումների վերաբերյալ:

32. Հրդեհի կանխում: Բոլոր կրակ և ծուխ առաջացնող նյութերը (որոնք սովորաբար կոչվում են հսկվող նյութեր) պետք է ոչնչացման գործողությունների ղեկավարի կողմից պահվեն փակ տարրայում՝ հսկողության տակ: Ծխի առաջացումը պետք է տեղի ունենա միայն նախապես հատկացված ծխելու տարածքում, որը հեռու է բոլոր պայթուցիկներից և որոշ դեպքերում որոշվում է ոչնչացման գործողությունների ղեկավարի կողմից:

33. Ոչնչացման կազմակերպությունները պետք է ստեղծեն և պահեն հրդեհի կանխման մեխանիզմներ և ԳՍԸ-ներ:

34. Մնդի և խմիչքի ընդունում: Մնդի և խմիչքի ընդունումը ևս պետք է հսկվի՝ պայթուցիկ մասնիկների կամ աղտոտված նյութերի կուլ տալը կանխելու համար: Անհրաժեշտության դեպքում ոչնչացման գործողությունների ղեկավարը պետք է հավաստիանա, որ

անձնակազմի անդամները լվանում և լավ մաքրում են ձեռքերը նախքան ճաշելը կամ զովացուցիչ ըմպելիքներ խմելը:

35. Տրանսպորտային կարգուկանոն: Կետերը, որոնց պետք է անդրադառնալ, հետևյալն են՝

1) հատկացված ավտոճանապարհները պետք է նախապատրաստվեն (ցանկալի է կոշտ մակերեսով) և չպետք է հատեն կրակման կամ հեռախոսային մալուխները, եթե այս մալուխ-ները պատշաճ կերպով թաղված կամ պաշտպանված չեն.

2) ոչ մի մեքենա 30 մետրից ավելի չպետք է մոտենա ոչնչացման հորին կամ զինամթերքին, որն ապափաթեթավորված է և պատրաստ ոչնչացման համար.

3) շարժիչները պետք է անջատված լինեն մեքենաների բեռնման և բեռնաթափման ժամանակ.

4) մեքենաները պետք է կայանվեն վտանգի տարածքից դուրս նշված վայրում, երբ ոչնչացման գործողություններ են տեղի ունենում.

5) բեռների առանձնացումը. տարբեր մեքենաներ կպահանջվեն պայթյունն իրակա-նացնելու նպատակով նախատեսված պայթուցիկների, ինչպես նաև ոչնչացման ենթակա զինամթերքի պաշարների համար: Պետք է նշանակվի բեռնման (բեռնաթափման) համար պատասխանատու անձ:

36. Հատուկ համազգեստ է պահանջվում ոչնչացման որոշ հանձնարարությունների համար, և սա պետք է մանրամասնվի ԳՍԸ-ներում: Մնացած բոլոր դեպքերում համազգեստը պետք է հարմար լինի եղանակին: Հատկապես անվտանգության պահակները պետք է եղանակից պաշտպանվելու համապատասխան հագուստ կրեն:

37. Ոչնչացման վայրին հատուկ անվտանգության նկատառումներ: Դրանք ներառում են՝

1) ականջակալների պարտադիր գործածում կրակողների կողմից, եթե լիցքերի հզորությունը և կրակակետի մոտիկությունը պայթեցման կետին պարտադրում են դրա գործադրումը.

2) սահմանափակումներ ռազմամթերքի վերացման և այրման շուրջ, եթե քամու ուժգնությունը և ուղղությունը կարող է տանել ծուխը դեպի պակաս անվտանգ մասեր:

38. Պատահարներին պատրաստվելը և արձագանքման գործընթացներ: Ոչնչացման վայրում պատահարների համար նախապատրաստվելու ամբողջ գործողությունները պետք է իրականացվեն սույն չափորոշիչների պահանջներին համապատասխան: Սա ներառում է բուժօգնության գործընթացների փաստաթղթավորում՝ ոչնչացման վայրին վերաբերող ԳՍԸ-ներում:

39. Պատահարից հետո պետք է կիրառվեն հետևյալ գործընթացները՝

1) գործի դնել պատահարին արձագանքելու պլանը, դադարեցնել ոչնչացման գործողությունները և անվտանգ դարձնել արդեն նախապատրաստված ցանկացած ոչնչացման գործողություն.

2) զեկուցել պատահարի մասին վերադաս օղակին, պահպանել պատահարի վայրը և գրի առնել դեպքի հետ կապված բոլոր մանրամասները.

3) անվտանգ դարձնել և վերափաթեթավորել բոլոր զինամթերքն ու պայթուցիկները, որոնք փաթեթից հանվել և պատրաստվել են ոչնչացման: Պատահարում ներգրավված անձանց պահել առանձին՝ սպասելով հետաքննության արդյունքներին:

## IX. ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԸ

40. Պետք է վարվի ոչնչացման գործողությունների մշտական գրանցամատյան, որը լրացվում է ամեն օր և ստորագրվում ոչնչացման գործողությունների ղեկավարի կողմից:

41. Պետք է պատրաստվի ոչնչացման համար անհրաժեշտ պարագաների ցուցակ:

42. Անհրաժեշտ է ընտրել ոչնչացման ամենահարմար մեթոդն ու վայրը, ընդ որում՝

1) եթե ցուցակը սահմանափակված է պարագաների և ԶՊՄ-ի փոքր քանակով, նպատակահարմար է կիրառել տեղում ոչնչացումը.

2) եթե ցուցակը ներառում է պարագաների ավելի մեծ ցանկ, որտեղ ԶՊՄ-ն ավելի շատ է,, ապա ոչնչացման գործողությունները պետք է իրականացվեն ավելի հեռու վայրում, որոնք ունեն պայթուցիկների կիրառման ավելի քիչ սահմանափակում: Այս վայրերը պետք է ընտրվեն նախապես.

3) պետք է հստակեցվի ոչնչացումն սկսելու համար անհրաժեշտ օժանդակ պայթուցիկի տիպն ու քանակները.

4) ոչնչացման պարագաների ցուցակը պետք է առանձնացվի ըստ առանձին շարքերի.

5) ամեն առանձին շարքի համար ԶՊՄ-ի քանակը (ներառյալ օժանդակ ոչնչացման պայթուցիկները) չպետք է գերազանցի ոչնչացման վայրի պայթուցիկների սահմանափակման չափը.

6) բոլոր հզոր պարագաները (օրինակ՝ նրանք, որոնք ունեն ՀՊ մեծ բաժին զինամթերքի քաշի համեմատությամբ, ինչպես օրինակ հակատանկային (ՀՏ) ականները) պետք է բաժանվեն ըստ շարքերի՝ բարելավելով օժանդակ ոչնչացման պայթուցիկների արդյունավետությունը: Պարագաների միավորումը շարքերի միջև կազդի ընտրվող ոչնչացման մեթոդի վրա:

43. Անհրաժեշտ է մշակել ոչնչացման հրաման և ծրագիր, որոնք ներառում են հետևյալը՝

1) ամսաթվերը, ժամանակը և վայրերը.

2) անձնակազմի կոնկրետ անվանական դերը ոչնչացման խմբում.

3) ՀՀԱ –ի և ոչնչացման ենթակա այլ զինամթերքի ցուցակը.

4) օժանդակ պայթուցիկների և պահանջվող պայթուցիկ նյութերի ցուցակը.

5) ոչնչացման գործողությունների բաժանում մասերի՝ ըստ շարքերի և ոչնչացման վայրի առանձին հատվածների.

6) հաղորդակցության կազմակերպումը.

7) անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նախապատրաստություններ.

8) վարչական հարցեր (կացարանի տրամադրում, սնունդ, փոխադրում).

9) ճանապարհները.

10) անհրաժեշտ պարագաների ցուցակը:

44. Ոչնչացման գործողությունների մասին պարտադիր նախազգուշացվում են ԱԳԱՄ-ը, տեղի համայնքները, ինչպես նաև տեղի ցանկացած օժանդակ կառույցները (օրինակ՝ հիվանդանոց):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 27
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 23-ի N 454 -Ն որոշման

# ԿՈՒՏԱԿՎԱԾ ՋԻՆԱՄԹԵՐՔԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Սույն չափորոշիչն սկզբունքներ է սահմանում և ուղղություն է տալիս կուտակված զինամթերքի ոչնչանցման գործողությունների արդյունավետ պլանավորման և կառավարման համար:

## I. ԿՈՒՏԱԿՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

2. Գործընթացն իրականացվում է չորս փուլերով՝ պլանավորում, նախապատրաստում, ոչնչացում և ստուգում:

3. Պլանավորումը տեղեկությունների հավաքումն է, վերլուծությունը և կիրառումը, գործելու համապատասխան մեթոդի ընտրությունը և այն մեթոդի մանրամասն ձևակերպումը, որով հանձնարարությունը պետք է իրականացվի:

4. Կուտակված զինամթերքի ոչնչացման պլանավորումը պահանջում է հստակ և ժամանակին տրվող տեղեկություններ ՀՀԱ-ի քանակի, պահեստավորման վայրի, տիպի և տեխնիկական նախագծման վերաբերյալ՝ բացի առկա ոչնչացման տեխնոլոգիաների մասին գիտելիքներից:

5. Ֆինանսական կողմն իհարկե կունենա իր ազդեցությունը, սակայն մինչև պաշարների ոչնչացման պլանավորումն ավարտելը դժվար կլինի հաշվել իրական ծախսերը: Իսկապես, երբ ռեալ ծախսերն արդեն հաշվարկված են, կարող է անհրաժեշտություն առաջանա վերապլանավորելու ոչնչացման գործողությունները՝ ֆինանսապես ավելի արդյունավետ ճանապարհ գտնելու նպատակով:

6. Նախապատրաստությունը ներառում է բոլոր այն գործողությունները, որոնք կօգնեն պարզաբանել ոչնչացման պահանջները և զարգացնել ազգային մարմնի և ոչնչացնող կազմակերպությունների կարողությունները՝ իրականացնելու ոչնչացման հանձնարարությունը:

7. Առկա զինամթերքի հաշվառման ճշգրտությունը շատ կարևոր է հավաստիանալու համար, որ ապագա հսկման և ստուգման գործողությունները չեն հայտնաբերի հաշվառման սխալներ կուտակած պաշարների ոչնչացման գործընթացն սկսելուց հետո: Հաշվառման ցանկացած սխալ կարելի է ուղղել այս փուլում, որը հետագայում կնպաստի անվտանգությանը և վստահության կառուցման միջոցառումներին:

8. Չպետք է լինեն <<անակնկալներ>> ոչնչացման, հսկման և ստուգման գործընթացներն սկսելուց հետո:

9. Կան զինամթերքի հաշվառման մի շարք համակարգչային համակարգեր: Ազգային մարմինը պետք է նկատի ունենա ՀՀԱ-ի մասին տվյալները նման մի համակարգի վրա բեռնելու խնդիրը: Սա կբարելավի ճշգրտությունը և գործառնական արդյունավետությունն ապառազմականացման ցիկլի ընթացքում:

10. Զինամթերքի հաշվառումը տեղեկություններ կտա կուտակված ՀՀԱ-ի նախնական պահեստավորման վայրերի մասին: Այնուհետև պետք է գնահատվի դրանցից ազատման վերջնական կետում պահեստավորման հնարավորությունների և պայմանների մասին: Այս գնահատումից կախված կլինի, թե ինչքան ՀՀԱ է կարելի ապահով պահեստավորել ոչնչացման գործընթացի ժամանակ:

11. ՀՀԱ-ի կուտակված պաշարների ֆիզիկական անվտանգությունը դրանցից ազատվելու վերջնական կետում ևս պետք է գնահատվի՝ անվտանգության համապատասխան չափանիշների պահպանման առումով:

12. Երբ ՀՀԱ-ից վերջնական ազատման վայրում պահեստավորման հնարավորությունները և ոչնչացման ծավալներն արդեն գնահատվել են, կարելի է ձևակերպել ոչնչացման գործողությունների տեղափոխման պլանը:

13. ՀՀԱ-ի ֆիզիկական վիճակից է կախված, թե արդյոք դրանք <<անվտանգ են տեղափոխման համար>> թե ոչ, ինչպես նաև զինամթերքի տեխնիկական անձնակազմը պետք է կատարի պաշտոնական <<Անվտանգ է տեղափոխման համար>> գնահատում որպես տեղափոխման գործընթացի մաս:

14. Երբ արդեն այս տեխնիկական գնահատականը տրվել է, ապա ՀՀԱ-ն կարող է ֆիզիկապես տեղափոխվել ոչնչացման վայր:

15. Առկա ֆիզիկական ոչնչացման տեխնիկաները տատանվում են համեմատաբար պարզ բաց այրում և բաց պայթեցում (ԲԱԲՊ) տեխնիկաներից մինչև գերժամանակակից արդյունաբերական գործընթացներ:

16. ԲԱԲՊ գործընթացների մշակումը կարող է տևել ամիսներ, մինչդեռ արդյունաբերական ապառազմականացման գործընթացների մշակումը կարող է տևել ամիսներ կամ տարիներ: Այս անգամ պահանջները պետք է ներառված լինեն պլանավորման և նախապատրաստական գործընթացներում՝ համոզվելու, որ ականների արգելման պայմանագրի (ԱԱՊ) քաղաքական պահանջները բավարարված են:

## II. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ (ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ)

17. Ականազերծման ծրագրերի ֆինանսավորումը գալիս է զանազան աղբյուրներից: Այն կարող է տրամադրվել ականների խնդիր ունեցող երկրի կառավարության, դոնոր երկրների, ՄԱԿ-ի կամ այլ միջազգային կազմակերպությունների կողմից, իսկ որոշ դեպքերում բարերարների և մարդասերների կողմից: Ֆինանսները կարող են պահպանվել ֆոնդերի կամ այլ տիպի հսկվող հաշիվների տարբերակով:

18. Անկախ ֆինանսավորման աղբյուրից կարևոր է, որ գումարները համապատասխանեն կուտակված զինամթերքի ոչնչացման իրական ծախսերին և որ դոնորի կողմից լինի երկարաժամկետ աջակցություն: Սա հատկապես կարևոր է մեծ ծրագրերի դեպքում, որոնք պահանջում են ոչնչացնող կազմակերպություններից մեծ ներդրումներ անել անձնակազմի, ենթակառուցվածքների և նոր թանկարժեք սարքավորումների առումով, որոնցից են հնոցները և աղտոտումը հսկող համակարգերը:

## III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

19. Կատարվելիք աշխատանքների բնորոշումը պետք է լինի պայմանագրի, հանձնարարագրերի կամ նման այլ ֆորմալ համաձայնագրերի տեսքով: Պայմանագրի կամ հանձնարարագրերի պատրաստումը հնարավորություն է տալիս ազգային մարմնին և դոնոր կազմակերպությանը (եթե կա) մանրամասնել ոչնչացման պահանջները:

20. Պայմանագիրը պետք է մանրամասն տվյալներ ներառի վտանգների և ՈՀ գործընթացների մասին, որոնք պետք է կիրառվեն ոչնչացման աշխատանքների ժամանակ: Այն նաև պետք է մանրամասնի հաշվետվության պահանջները, ինչպես նաև ֆինանսական և առաջխաղացման այն մակարդակները, որոնց պետք է հասնել:

21. Ոչնչացման ծրագրերը պահանջում են բարձր որակավորում ունեցող մենեջերներ և լավ վերապատրաստված անձնակազմ: Թեև որոշ կենտրոնացված վերապատրաստման ծրագրեր երկրի ղեկավարների և տեխնիկական անձնակազմի համար տեղին կլինեն, վերապատրաստման մեծ մասը պետք է իրականացվի ականների խնդիր ունեցող երկրում, ոչ միայն մշակութային և լեզվաբանական պատճառներով, այլև կուտակված զինամթերքի հետ կապված մանրամասների հասանելիության առումով:

22. Ոչնչացման ծրագրերի արդյունավետ կառավարումը պահանջում է ճշգրիտ, պատշաճ և ժամանակին տրվող տեղեկություններ: Կան տեղեկությունների բազմաթիվ աղբյուրներ տեղական, ազգային և միջազգային մակարդակներով, որոնք կարող են կիրառելի

լինել ծրագիրը պլանավորողների, ղեկավարների և դոնորների համար, սակայն այս տեղեկությունների հասանելիությունը հաճախ սահմանափակված է և կենսական տվյալների մանրամասները հաճախ հնարավոր չէ ճշգրտել:

23. Ազգային մարմինները և ոչնչացնող կազմակերպությունները պետք է հիմնեն և պահպանեն կառավարման տեղեկությունների արդյունավետ համակարգեր: Սրանք շատ էական են հաշվառման, հսկման և ստուգման համար:

24. ՄԱԿ-ի կուտակված զինամթերքի ոչնչացման կայքը՝ http://www.stockpiles.org/, օգտակար տեղեկությունների աղբյուր է կուտակված զինամթերքի ոչնչացման հետ կապված շատ հարցերի առումով: Այն ներառում է առկա տեխնոլոգիաների և դեպքերի ուսումնասիրությունների մասին ամփոփ տեղեկատվություն, որը կարելի է կիրառել պլանավորման գործընթացում:

## IV. ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

25. Մինչև վերջերս ՀՀԱ-ի ոչնչացման ծրագրերը միշտ հիմնվել են ԲԱԲՊ-ի տեխնիկաների վրա՝ կիրառելով ձեռքով աշխատելու գործելաոճեր, գործընթացներ և վարժություններ: Շատ դեպքերում ԲԱԲՊ-ը կարող է լինել ոչնչացման ամենարդյունավետ և գնային տեսանկյունից ամենահարմար տեխնիկան:

26. Սակայն որոշ ծրագրերում մասշտաբների մեծացման հաշվին արդյունավետության բարձրացումը, կամ որոշ տիպի ՀՀԱ-ների ոչնչացման հետ կապված տեխնիկական խնդիրները թույլ կտան, որ ոչնչացումն իրականացվի ավելի անվտանգ և արդյունավետ կերպով՝ օգտագործելով արդյունաբերական տեխնիկաներ:

27. Ոչնչացման տեխնոլոգիաները կարող են միավորվել երեք ընդհանուր խմբում՝ ըստ իրենց տեխնիկական հասունության և մատչելիության՝ լիարժեքորեն մշակված սարքավորում, որը փորձարկվել և գնահատվել է (ՓԳ), և կարող է ներմուծվել ոչնչացման ծրագրերի մեջ առանց որևէ մեծ փոփոխությունների (օրինակ՝ պտտվող հնոցները), այն տեխնոլոգիաները,

որոնք գործում են, սակայն կարիք ունեն հետագա լրամշակման և ֆորմալ ՓԳ-ի (օրինակ՝ ճեղքում սառեցմամբ) և այն տեխնոլոգիաները, որոնք կարող են կիրառելի լինել ոչնչացման համար, սակայն դեռ պետք է հասցվեն ավարտի և դեռ պաշտոնապես չեն ցուցադրվել (օրինակ՝ Silver II):

28. Ոչնչացնող կազմակերպությունները պետք է իրենց սարքավորումները ձեռք բերեն ելնելով առաջին խմբից, սակայն հնարավորության դեպքում պետք է օժանդակեն երկրորդ խմբի տեխնոլոգիաների մշակման և ոչնչացման վայրում տեղակայման հարցում: Որոշ նոր տեխնոլոգիաներ օժտված են անվտանգության և ծախսերի կրճատումների ներուժով, և դոնորները պետք է օժանդակեն և խրախուսեն այն ոչնչացնող կազմակերպություններին, որոնք տեղադրում են նոր տեխնոլոգիաներ, ինչպես նաև նրանց ՓԳ-ն:

29. Ոչնչացումը զինամթերքի և պայթուցիկների՝ իներտ վիճակի վերածելու վերջնական գործընթացն է, որի պատճառով նրանք այլևս չեն կարող գործել ըստ նախնական նշանակության:

30. Ոչնչացման ծրագրերի ղեկավարներից պահանջվում է ստեղծել անվտանգ աշխատանքային միջավայր՝ արդյունավետ կառավարման և ղեկավարման միջոցով, ինչպես նաև այնպիսի գործելաոճեր մշակել, որոնք նվազեցնում են ռիսկը՝ անվտանգ դիզայն ունեցող սարքավորումներ ընտրելու, պատշաճ վերապատրաստում ապահովելու և առկա արդյունավետ անձնական պաշտպանիչ սարքեր (ԱՊՍ) ապահովելու միջոցով:

31. Ելնելով հնարավոր տեխնիկական լուծումների լայն շրջանակից՝ հնարավոր չէ տրամադրել հստակ և լիարժեք մասնավորեցումներ, որոնք վերաբերում են բոլոր իրավիճակներին: Այսպիսով, ոչնչացնող կազմակերպությունները պետք է մշակեն և պահպանեն կառավարման գործընթացներ, որոնք հնարավորություն կտան հայտնաբերել Ա&ՄԱ ռիսկերը, որոնք կգնահատվեն և կնվազեցվեն ժամանակին և սիստեմատիկ ձևով ամեն ոչնչացման հանձնարարության և ոչնչացման աշխատավայրի համար:

32. Արդյունավետ և անվտանգ օպերացիոն գործընթացների պահանջն էական է: Գործառնական ստանդարտ ընթացակարգերը (ԳՍԸ) պետք է պատրաստվեն բոլոր օպերացիոն գործընթացների, գործելաոճերի և վարժությունների համար: ԳՍԸ-ներն այնպիսի ցուցումներ են, որոնք սահմանում են օպերացիոն հանձնարարություն կամ գործողություն կատարելու նախընտրելի մեթոդը: Դրանց նպատակը կազմակերպությունում միատարրության, վստահության և ընդհանրության ընդունելի և չափելի աստիճաններ ստեղծելն է՝ գործառնական արդյունավետությունը և անվտանգությունը բարելավելու նպատակով: ԳՍԸ-ները պետք է արտացոլեն տեղական պահանջներն ու հանգամանքները:

## V.ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ (ՈԿ)

33. Ոչնչացման մեջ մտնում են կառավարման ընթացակարգերի և օպերացիոն գործընթացների հիմնումը և հսկումը նախքան ոչնչացման գործընթացը և դրա ընթացքում: Ներքին որակի հսկումը կիրականացվի հենց ոչնչացնող կազմակերպությունների կողմից, սակայն արտաքին հսկող մարմնի կողմից ևս պետք է իրականացվեն ստուգումներ:

34. ՈԿ-ի նպատակն է հավաստիանալ, որ ոչնչացման կառավարման գործելաոճերը և օպերացիոն գործընթացները համապատասխան են, և նշված նպատակները ձեռք կբերվեն անվտանգ և արդյունավետ կերպով: Այն պետք է ներառի հստակ քննարկումներ ղեկավարության և անձնակազմի հետ, ինչպես նաև ԳՍԸ-ների պաշտոնական քննում, զեկույցներ և գրանցումներ:

## VI. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ

35. Ոչնչացման գործընթացի թափանցիկությունը կարևոր նախապայման է որպես անվտանգության և վստահության կառուցման գործոն: Չպետք է թերագնահատվի լրատվամիջոցների դերը երկրում առկա ՀՀԱ-ի պաշարների ոչնչացման թափանցիկությունը երկրի և միջազգային մակարդակով ապահովելու համար: Ազգային մարմինը, ոչնչացնող

կազմակերպության հետ համատեղ, պետք է լրատվության պլան մշակի գործողությունների պլանավորման փուլում: Այս պլանը պետք է ներառի՝

1) մամլո հաղորդագրություններ.

2) լրագրողների և օպերատորների մուտք դեպի ոչնչացման վայր.

3) ոչնչացման տեսաձայնագրություններ և լուսանկարներ.

4) մուտք դեպի զինամթերքի հաշվառման համակարգ:

## VII. ՀԵՏԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՀԾԳ)

36. Հնարավորության դեպքում ոչնչացնող կազմակերպությունները պետք է իրականացնեն պաշտոնական ՀԾԳ՝ որոշելու գործողությունների պլանավորման, նախապատրաստման և ոչնչացման փուլում քաղած դասերը: ՀԾԳ-ում պետք է ներառվի զեկույց սարքավորումների հարմար լինելու, գործընթացների, վերապատրաստման և աջակցության վերաբերյալ:

37. Մտահոգություն առաջացնող հարցերը պետք է առաջ քաշվեն և դասվեն ըստ հերթականության, ինչպես նաև պետք է առաջարկվեն լուծումներ: ՀԾԳ-ի վերաբերյալ պահանջները պետք է դոնորների կամ ազգային մարմնի կողմից ներառվեն ոչնչացման պայմանագրերի մեջ: ՀԾԳ-ները պետք է բաժանվեն ՄԱԿ-ին (ՄԱԿԱԾ, ՄՋԾ և UNOPS), դոնորներին և հովանավորներին, իսկ մեկ օրինակ պետք է դրվի ՄԱԿ-ի կուտակված զինամթերքի ոչնչացման կայքում: Եթե ՀԾԳ-ները թերություններ են մատնանշում սարքավորումների կամ գործընթացների հետ կապված, մանավանդ եթե դրանք կապված են անվտանգության հետ, ապա դրանք պետք է ավելի լայնորեն տարածվեն:

## VIII. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՒՄԸ (ՈՀ)

38. Ոչնչացման գործողությունների արդյունավետ կառավարումը նպատակ ունի ոչնչացնել ՀՀԱ-ի պաշարներն անվտանգ և արդյունավետ կերպով: Սրան կարելի է հասնել համարժեք կառավարման գործընթացներ մշակելու և կիրառելու, ղեկավարների և

աշխատողների հմտությունները շարունակաբար բարելավելու և ՀՀԱ-ների տեխնիկական հատկությունների և ֆիզիկական վիճակի մասին հստակ ու ժամանակին տեխնիկական տեղեկություններ ձեռք բերելու, անվտանգ և արդյունավետ օպերացիոն գործընթացներ, ինչպես նաև համապատասխան և էֆեկտիվ սարքավորումներ կիրառելու միջոցով:

39. Սակայն, կառավարում չի նշանակում միայն ընթացիկ հանձնարարությունների պլանավորում և ղեկավարում. այն նաև նշանակում է վերանայել ներկա գործելաոճերը և գործընթացները՝ բարելավելու անվտանգությունն ու արդյունավետությունը: Այն գործընթացն ու ընթացակարգերը, որոնք նպատակ ունեն շարունակաբար բարելավել կազմակերպության կառավարման համակարգը և գործառնական պրակտիկաները սովորաբար կոչվում են որակի հսկում (ՈՀ):

40. Կազմակերպության համար ՈՀ-ի դրսևորման մեթոդներից ISO 9000 չափորոշիչ-ների բավարարումն է: Կան մեծ ծավալի վերապատրաստման նյութեր և ընդհանուր տեղեկու-թյուններ ազգային մարմինների և ոչնչացնող կազմակերպությունների համար, որոնք կարող են յուրացնել ISO 9000 մոտեցումները:

41. Ոչնչացնող կազմակերպությունների ղեկավարներին խորհուրդ է տրվում քննության առնել, թե ինչպես կիրառել ՈՀ-ի սկզբունքները զինամթերքի ոչնչացման հարցում: Այս անելիս նրանք հատուկ ուշադրություն պետք է դարձնեն երկու խնդրի: Առաջին՝ թե ինչպես պետք է պլանավորվեն, իրականացվեն, հսկվեն և վերանայվեն հատուկ գործընթացները: Երկրորդ՝ նրանք պետք է նշեն բոլոր ղեկավարների և աշխատողների պարտականությունները՝ բնորոշելու և օգուտ քաղելու տարբեր հնարավորությունների գործընթացի բարելավման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 28
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 23-ի N 454 -Ն որոշման

# ՀԱԿԱԱԿԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Սույն չափորոշչի նպատակը հակաականային գործողությունների գնահատման նախապատրաստման և իրականացման, ինչպես նաև գնահատման արդյունքների, եզրահանգումների, քաղած դասերի և առաջարկությունների զեկուցման, տարածման և օգտագործման վերաբերյալ ուղենիշեր ապահովելն է:

## I. ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

2. Գնահատումը նշանակում է որևէ գործողության, քաղաքականության, նախագծի կամ ծրագրի <<արժեքի կամ նշանակալիության>> սահմանման գործընթաց: Հակաականային գործողությունների գնահատման <<արժեքը կամ նշանակալիությունը>> առաջին հերթին որակվում է ականներից տուժած համայնքների, տարածքների և երկրների բնակիչների բարեկեցության մեջ տեղի ունեցած փոփոխությունների տեսանկյունից, ինչպես նաև իրենց սեփական զարգացումն ու առաջընթացը կառավարելու համար տեղական կարողությունների բարելավման տեսանկյունից՝ բավարարելու ականների և պատերազմի պայթուցիկ մնացորդ-ների (ՊՊՄ) ոչնչացման առումով այդ երկրների միջազգային պարտավորությունները:

3. Հակաականային գործողությունները և ուղղակի ապրանքները (օրինակ՝ վնասազերծված տարածքներ, մարդկանց համար ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ) կազմակերպում, աջակցություն տուժածներին և այլն) նույնպես հաշվի են առնվում գնահատման ժամանակ, բայց հիմնականում որպես ցանկալի վերջարան խթանելու միջոցներ (օրինակ՝ թիրախային շահառուների բարելավված բարեկեցություն, տեղական կարողու-թյունների զարգացում, առաջընթաց միջազգային պարտավորությունների առումով). դրանք

իրենց էությամբ հակակականային գործողությունների նախագծի կամ ծրագրի որևէ արժեք չեն ներկայացնում:

4. Գնահատումը ընթացիկ կամ ավարտված նախագծի, ծրագրի կամ քաղաքականության, դրա դիզայնի, իրագործման և արդյունքների հնարավորինս համակարգված և օբյեկտիվ որակումն է: Դրա խնդիրը նպատակների կարևորությունն ու իրականացումը, զարգացման գործունեությունը, արդյունավետությունը, ազդեցությունը և հաստատուն կայունությունը սահմանելն է: Գնահատումը պետք է վստահելի և օգտակար տվյալներ ապահովի՝ հնարավոր դարձնելով քաղած դասերի ներառումը թե աջակցություն ստացողների, և թե դոնորների կողմից որոշումներ ընդունելու գործընթացում:

5. Գնահատումը պարզապես տվյալների համակարգված հավաքագրում և մշակում չէ: Գնահատումը պահանջում է վճռական խնդիրների հատկորոշում, որոշումների առումով նախապատմության և պատճառաբանության սահմանում, պատճառների և ազդակների վերլուծություն և որոշ դեպքերում հնարավոր հետագա արդյունքների կանխատեսում:

6. Գնահատման հիմնական նպատակներն են՝

1) գործողության բարեփոխում՝ հակակականային գործողությունների նախագծի կամ ծրագրի հետևանք հանդիսացող արդյունքների կամ տեղացի մարդկանց և կազմակերպությունների բարելավված բարեկեցության և կարողությունների առումով.

2) բարձրացնել շահագրգիռ կողմերի (դոնորներ, ԱԳԱՄ, թիրախային շահառուներ և այլն) պարտավորությունը:

7. Գնահատումը պետք է փորձ կատարի օգուտ բերել բազմաթիվ շահագրգիռ կողմերին, այդ թվում նաև՝ հակակականային գործողությունների ազդեցությունը կրող համայնքներին, հակակականային գործունեությունը հովանավորող դոնորական գործակալություններին, կառավարությանը և դրա աջակից մարմիններին, ինչպիսիք են՝ ԱԳԱՄ-ը և իրականացնող գործակալությունն ու նրա գործընկերները:

8. Գնահատումն ուսումնասիրում է (կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ) նպատակների և գործոնների իրագործումը, օրինակ՝ նշանակությունն ու կայուն հաստատությունը: Հակաականային գործողությունների գնահատման հարցում կարող են կիրառվել հետևյալ չափանիշները՝

1) նշանակություն՝ այն ծավալը/խորությունը, համաձայն որի միջամտության նպատակները համահունչ են շահառուների պահանջներին, երկրի կարիքներին, գլոբալ գերակայություններին և դոնորների քաղաքականությանը.

2) գործունեություն՝ միջոց, թե ինչպես են ռեսուրսները/ծախսերը (ֆինանսներ, վարպետություն, ժամանակ և այլն) տնտեսապես վերածվում հետևանքների (ապրանքներ և արդյունքներ).

3) արդյունավետություն՝ այն ծավալը/խորությունը, համաձայն որի հասանելի են դառնում միջամտության նպատակները կամ ենթադրվում է դրանց հասանելիությունը՝ հաշվի առնելով դրանց հարաբերական կարևորությունը.

4) ազդեցություն՝ միջամտության պատճառով ուղղակիորեն կամ անուղղակիորեն, միտումնավոր կամ ոչ միտումնավոր կերպով ծագած դրական և բացասական, առաջնային և երկրորդական երկարաժամկետ ներգործություն: Սա կարող է փոխարինել <<վերջնական արդյունք>> տերմինը.

5) կայունություն՝ հակաականային գործողությունների միջամտության նպաստների շարունակություն, երբ հիմնական աջակցությունն արդեն ավարտվել է.

6) ապահովություն և որակ՝ սա սկզբունքորեն վերաբերում է ականազերծման գործողություններին և անդրադառնում է այն հարցին, արդյոք աշխատանքներն ապահով են ընթացել և հասել են այդ գործողության որակի պահանջվող չափորոշիչներին (օրինակ՝ տեխնիկական հետազոտում, վնասազերծում, նշագրում և այլն):

9. Նշված չափանիշներից նշանակությունը, գործունեությունը, արդյունավետությունը և ապահովություն/որակն ամենադյուրինն են գնման համար: Նախագծի կամ ծրագրի երկարաժամկետ ազդեցության և կայունության սահմանումը դժվար է որակել, եթե գնահատումը տեղի չի ունենում միջամտության ավարտից հետո մի որոշ պահին:

## II. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

10. Գնահատումները կարող են պատվիրվել՝ գնելու հակաականային գործողությունների միջամտությունների ստույգ կողմերը միայն, կամ էլ կարող են պարփակել նախագծի ընթացքի ամբողջ ծավալը և արդյունքները՝ ներառյալ ազդեցությունը/հետևանքները: Ցանկացած գնահատման ծավալն ու շրջանակը կախված են պատվիրող մարմնի առանձնահատուկ պահանջներից և գնահատման ժամանակի ընտրությունից: Օրինակ, ընթացիկ նախագծի կամ ծրագրի ժամանակ անցկացրած գնահատման ժամանակ հնարավորություն չի լինի մանրամասնորեն ուսումնասիրելու երկարաժամկետ նպատակների իրականացումը:

11. Ընդհանուր առմամբ գնահատումները կարող են բաժանվել չորս կարգերի՝

1) գործողության գնահատում.

2) արդյունքների գնահատում.

3) ազդեցության/հետևանքների գնահատում.

3) ֆորմատիվ գնահատում:

12. Գործողության գնահատումների գնահատականը (ԳԳԳ) չափում է միջամտության իրականացման աստիճանը, և թե որքանով են <<արդյունքները>> (կատարողականները) իրականացվել: ԳԳԳ-ները կիրառում են այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են՝ գործունեությունն ու տնտեսումը և հակաականային գործողությունների միջամտության ապահովության և որակի էական պահանջները:

13. ԳԳԳ-ներն ուսումասիրում են որևէ նախագիծ կամ ծրագիր մինչև այն փուլը, երբ արդյունքները (մաքրված հողատարածքներ, ԱՎԻ և այլն) հասանելի են դառնում թիրախային շահառուներին, եթե իրականացնող գործակալությունը նպատակ չի սահմանել ապահովելու նախատեսված շահառուների կողմից ապրանքների ճիշտ շահագործումը:

14. Արդյունքի գնահատումը կարող է գնահատական տալ միջամտության բոլոր կողմերին, այդ թվում նաև՝ արդյոք այն լավ մտահղացում է եղել և լավ դիզայն է ունեցել, և արդյոք այն հանգեցրել է շահառուների համար դրական արդյունքների: Արդյունքի գնահատումը կարող է նաև ուսումնասիրել կայունությունը:

15. Արդյունքի գնահատումը գնում է միջամտության ապրանքները և սահմանում, թե ինչպես են շահառուներն օգտագործում այդ ապրանքները՝ ստանալու սոցիալ-տնտեսական օգուտ (արդյունքի օրինակ՝ մաքրված հողատարածքի շահագործում հացահատիկ աճեցնելու համար կամ ԱՎԻ արդյունքում ավելի անվտանգ վարքագիծ) կամ էլ ինչպես են բարելավված գործողության համար կիրառում նոր կարողությունները:

16. Ազդեցության գնահատումը գնահատական է տալիս միջամտության երկարաժամկետ հետևանքներին (պլանավորած և չմտածված, դրական և բացասական): Ազդեցության գնահատումն ամենադժվար տեսակն է իրականացման համար, քանի որ պահանջվում է որակում տալ այն բանին, ինչ տեղի է ունենալու ապագայում, և ինչ տեղի կունենար, եթե չլիներ հակաականային գործողությունների միջամտությունը:

17. Բացի դրանից՝ ազդեցության գնահատման, ինչպես նաև ավելի թույլ կերպով արդյունքի գնահատման դեպքում կան մի նախագծին կամ ծրագրին չպատկանող մի շարք ներգործություններ, որոնք ազդում են արդյունքների վրա: Այդ գործոնները, որոնք ներառում են քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային գործոններ, ինչպես նաև այլ նախագծերի կամ ծրագրերի գործողությունը, նույնպես պետք է գնվեն՝ պարզելու այն

ծավալը/խորությունը, ըստ որի այդ գործոններն ազդել են գնահատման ենթակա դարձած միջամտության հետևանքների վրա:

18. Ֆորմատիվ գնահատումը միտված է գործողության բարելավմանը և ամենահաճախակին է իրականացվում նախագծերի կամ ծրագրերի իրագործման փուլում: Ֆորմատիվ գնահատումը կիրառվում է՝ ապահովելով ծրագրի ղեկավարների և այլ անձնակազմի հետադարձ կապը նախագծի կամ ծրագրի բաղադրիչների հետ, որոնք գործում են կամ էլ կարիք ունեն փոփոխվելու:

## III. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

19. Գնահատման ծավալն ու շրջանակը տարբեր կլինեն հակակականային գործողությունների միջամտություններում, սակայն կիրառվում են որոշակի ընդհանուր սկզբունքներ՝

1) գնահատումը պետք է իրականացվի միայն այն դեպքում, երբ առկա է հակակականային գործողությունների նախագծի կամ ծրագրի վերաբերյալ անկախ և անկողմնակալ որակման սահմանված կարիք.

2) գնահատման պլանավորումը պետք է ընդգրկված լինի միջամտության բնօրինակի դիզայնում, այդ պատճառով էլ հավաքագրվում են հիմունքային տեղեկատվություն և առաջընթացի ցուցանիշներ՝ գնահատում իրականացնողներին ապահովելով անհրաժեշտ վկայությամբ.

3) գնահատումը պետք է օգտակար լինի: Ըստ էության գնահատումը միտված է բարելավելու միջամտության պլանավորումն ու իրագործումը, այն նպաստում է որոշումների ընդունմանն ու ռազմավարության ձևավորմանը.

4) հնարավորության դեպքում գնահատումը պետք է համագործակցական նախաձեռնություն լինի՝ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ.

5) գնահատման արդյունքները պետք է տրամադրվեն բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում նաև՝ հակակականային գործողությունների միջամտության շահառուներին:

## IV. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ և ԱՈՒԴԻՏ

20. Մոնիթորինգը նպաստում է գնահատմանը՝ ապահովելով քանակական և որակական տվյալներ արդյունքների իրականացման և նվաճման վերաբերյալ: Մոնիթորինգի տվյալներից առաջին հերթին օգտվում են նախագծի/ծրագրի ղեկավարները, սակայն դրանք պետք է նաև հավաքագրվեն և պահպանվեն, որպեսզի դրանցից կարողանան օգտվել գնահատում իրականացնողները:

21. Բացի պլանին կամ ընթացակարգերին համապատասխանությունը սահմանելուց՝ մոնիթորինգը կարող է նաև գնահատել՝

1) խնդիրների լուծման կամ արդյունքների նվաճման առաջընթացը.

2) համապատասխանությունը որակի և ապահովության չափորոշիչներին.

3) այն միջավայրի փոփոխությունը, որում տեղի է ունենում միջամտությունը: Նման տեղեկատվությունը կաջակցի գնահատմանը՝ նշելով միջամտության վրա ներգործող որոշ արտաքին գործոններ.

4) նախագծի կամ ծրագրի շահառուների բարեկեցության փոփոխությունը, որը կնպաստի գնահատմանը՝ սահմանելու արդյունավետությունն ու հնարավոր ազդեցությունը:

22. Աուդիտն ու գնահատումը միմյանց լրացնող գործառույթներ են, և նրանց միջև կա որոշ համընկնում: Աուդիտը կառավարման վերահսկման համարժեքության գնահատումն է՝ ապահովելու ռեսուրսների տնտեսողական և գործունյա օգտագործումը, ակտիվ-ների/միջոցների ապահովության երաշխավորումը, ֆինանսական և այլ տեղեկությունների արժանահավատությունը, համապատասխանեցումը կանոնակարգերին, կանոններին և սահմանված քաղաքականությանը, ռիսկի կառավարման արդյունավետությունը և կազմա-կերպական կառուցվածքների, համակարգերի և գործընթացների համարժեքությունը:

23. Աուդիտը մի գործողություն է, որը նախագծվել է՝ վստահեցնելու շահագրգիռ կողմերին, որ գործառնությունները համապատասխանում են կիրառելի օրենքներին,

կանոնակարգերին, չափորոշիչներին և նորմերին (համապատասխանեցման աուդիտ), կամ էլ որ գործողության համաձայնեցված խնդիրները լուծվում են տնտեսող և գործունյա կերպով (գործողության աուդիտ):

24. Աուդիտի ուշադրության կենտրոնում են գործառնություններն ու կառավարման վերահսկումը: Աուդիտը որակում է դրանք ըստ քիչ թե շատ հստակորեն մշակված նորմերի կամ չափորոշիչների, մինչդեռ գնահատման ծավալն ավելի լայն է և ընդգրկում է ավելի խորը ռազմավարական հարցեր՝ ընդարձակ սկզբունքների և չափանիշների հիման վրա ընդունած որոշումներով և տարբեր մոտեցումներով, որոնք կարող են կիրառվել՝ տարբեր տեսանկյուններից որակելու նախագծի կամ ծրագրի արժեքը:

25. Աուդիտը ծառայում է հետևյալ հիմնական նպատակներին՝

1) ապահովել համապատասխանեցումը սահմանված նորմերին կամ չափորոշիչներին.

2) բարձրացնել հակաականային գործողությունների համար վճարողների առջև պատասխանատվությունը.

3) գործողության բարելավում գործառնությունների առումով՝ հակաականային գործողությունների նախագծի/ծրագրի ռեսուսային ծախսեր ու գործողություններ և հակաականային գործողությունների ապրանքների և ծառայությունների ուղղակի արտադրանք:

## V. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

26. Գնահատումը պետք է պլանավորել միայն այն ժամանակ, երբ առկա է հակաականային գործողությունների նախագծի կամ ծրագրի (կամ դրա որևէ հատվածի) վերաբերյալ անկախ և անկողմնակալ գնահատման սահմանված կարիքը, և առկա է այն մտադրությունը, որ գնահատման արդյունքները կկիրառվեն գործողության և պատասխանատվության բարելավման համար:

27. Գնահատման արդյունքները հաճախ կիրառվում են՝ նախագծի կամ ծրագրի ընթացքում վճռական որոշումներ ընդունելիս, այդ պատճառով էլ գնահատումը պետք է

պլանավորել նախօրոք՝ ապահովելու բավարար ժամանակի առկայություն՝ գնահատումն իրականացնելու, արդյունքների մասին զեկուցելու և դրանք տրամադրելու համար: Այս ամենն ապահովում է, որ առաջարկություններն ու փորձն առկա լինեն նախքան վճռական որոշումներ ընդունելը:

28. Գնահատումը նշանակալի պահանջներ է դնում ԱԳԱՄ-ի, հակաականային գործունություն իրականացնող կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի անձնակազմի առջև: Եթե իրագործելի է, ապա գնահատում պատվիրող կազմակերպությունները պետք է փորձեն ներդաշնակեցնել գնահատման իրենց պլանները և նախաձեռնել համատեղ գնահատումներ:

29. Եթե գնահատումը պահանջում է շահառուների բարեկեցության փոփոխության գնահատում, ապա պետք է ապահովել, որ շահառուները (կամ նրանց ներկայացուցիչները) խորհրդատվություն ստանան և, եթե գործնականորեն հնարավոր է, մասնակցեն գնահատմանն ու սահմանեն անհրաժեշտ հետագա քայլերը՝ հիմնվելով գնահատման բացահայտումների, առաջարկությունների և փորձի վրա:

30. Գնահատման պլանավորումը պետք է նաև թույլ տա դոնորների, ԱԳԱՄ-ի, հակաականային գործողությունների կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի համարժեք/համապատասխան մասնակցությունը:

## VII. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ/ԴԻԶԱՅՆԸ

31. Յուրաքանչյուր գնահատում պետք է նախագծվի և մշակվի տեխնիկական առաջադրանք, որը գնահատում իրականացնողներին կապահովի մանրամասն ուղեցույցով գնահատման բոլոր կողմերի վերաբերյալ: Եթե գործնականում հնարավոր է, ապա տեխնիկական առաջադրանքը պետք է մշակվի համապատասխան շահագրգիռ կողմերի հետ համատեղ:

32. Գնահատման նախագծման փուլում անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին՝

1) ակնկալիքների և այլ ՊՊՄ-ների նախապատմությունը.

2) գնահատման ենթակա միջամտության հակիրճ պատմությունը.

3) այն միջավայրի համապատասխան կողմերը, որում իրագործվում է նախագիծը կամ ծրագիրը (սոցիալական, մշակութային, աշխարհագրական և այլն, ինչպես նաև իրավական և քաղաքականության շրջանակներ).

4) հիմնական շահագրգիռ կողմեր և նրանց ներգրավման բնույթը.

5) կապակցված կամ լրացուցիչ գործողություններ ակնկալիքներից տուժած գոտիներում (մարդասիրական, զարգացման և այլն).

6) առկա խնդիրներ:

33. Գնահատման սուբյեկտը պետք է հստակորեն նշվի (առանձին նախագիծ, հակա-ականային գործողությունների ազգային քաղաքականություն կամ ծրագիր, իրականացնող գործակալություն, աջակցող կազմակերպություն, դոնորի քաղաքականություն կամ ռազմավարություն և այլն):

34. Գնահատման նպատակը պետք է հստակորեն սահմանվի: Նպատակը նախանշում է գնահատման այն տեսակը, որը պետք է իրականացվի, ինչու է իրականացվում գնահատումը (օրինակ՝ գործողության բարելավման պարտավորություն և (կամ) ուսումնառություն), ինչպես են օգտագործվելու արդյունքները (օրինակ՝ որպես միջամտությունը շարունակելու մասին որոշման ներդրում) և ովքեր են լինելու տեղեկատվություն օգտագործողները:

35. Ծավալը սկիզբ է առնում <<նպատակից>>՝ ապահովելով գնահատման սահման-ները/շրջանակը և կապ հաստատելով գնահատման խնդիրների ու չափանիշների և մասնա-վոր իրավիճակի միջև:

36. Ծավալը սերտորեն կապված կլինի իրականացվող գնահատման տեսակի հետ, բայց այն պետք է ավելի հատկորոշված մանրամասներ ապահովի գնահատման ծածկույթի

վերաբերյալ, օրինակ՝ որոշակի ժամանակահատված, նախագծի կամ ծրագրի իրագործման որևէ փուլ, աշխարհագրական գոտի և (կամ) շահագրգիռ կողմերի ներգրավման աստիճան:

37. Գնահատման նպատակները պետք է իրատեսական և իրականանալի լինեն՝ հատկացված ռեսուրսների և բյուջեի, տվյալների հավանական առկայության առումով, ինչպես նաև այն տվյալների, որոնք կարող են հավաքագրվել թույլատրված ժամանակում և ռեսուրսներով:

38. Ջնման ենթակա գնահատման չափանիշները պետք է հստակորեն սահմանվեն տեխնիկական առաջադրանքում: Հակակականային գործողությունների գնահատման համար չափորոշիչ գնահատման չափանիշներն են համապատասխանությունը, գործունեությունը, արդյունավետությունը, ազդեցությունը, կայունությունը և կիրառման դեպքում ապահովությունն ու որակը: Սակայն գնահատման ընթացքում այլ չափանիշների զննումը ևս կարող է պահանջվել:

## VIII. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

39. Գոյություն չունի գնահատման որևէ առանձին լավագույն մեթոդաբանություն: Գնահատման մեթոդները կախված են փնտրվող տեղեկատվությունից, որոշումների ընդունման ժամանակ կիրառված չափանիշներից, առկա ժամանակից և բազմաթիվ այլ գործոններից: Տվյալները պետք է մատակարարվեն տարատեսակ աղբյուրներից՝ ապահովելու դրանց ճշգրտությունը, վավերականությունն ու հուսալիությունը, և դրանով իսկ հաշվի են առնվում տուժած բոլոր մարդիկ և շահագրգիռ կողմերը:

40. Հնարավորության դեպքում տեղեկատվության հնարավոր աղբյուրների հիշատակումը պետք է ներառված լինի տեխնիկական առաջադրանքում: Մեթոդաբանությունը պետք է միանշանակորեն անդրադառնա թերի ներկայացված խմբերի խնդիրներին:

41. Որևէ սահմանափակում ընտրված գնահատման մեթոդների նկատմամբ նույնպես պետք է հիշատակվի տեխնիկական առաջադրանքում:

42. Տեխնիկական առաջադրանքը պետք է ապահովի գնահատման ինդիկատիվ ծրագիր, նշի գնահատման թիմի կազմը և խնդիրները, օրինակ՝ բյուջե, ճանապարհորդության, անվտանգության և համակարգման կազմակերպում:

43. Տեխնիկական առաջադրանքը պետք է նշի պահանջվող զեկույցները՝ ներկայացնելու գնահատման արդյունքները և զեկուցման որևէ առանձին պահանջները՝ ներառյալ ներկայացման/հանձնման ժամկետը՝ ապահովելու այն փաստը, որ նախատեսված վերջնաժամկետները կարող են բավարարվել:

## VII. ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

44. Գնահատողների ներգրավում և աշխատանք նրանց հետ գնահատումը պետք է իրականացվի լավ որակավորում ունեցող թիմերի կողմից, որոնք ընտրված կլինեն թափանցիկ գործընթացի միջոցով, որը գնահատում է թիմին թե որպես մի ամբողջություն, և թե որպես առանձին անհատ անդամներ: Թիմի անդամները պետք է փորձ ունենան այն երկրներում, ոլորտ(ներ)ում կամ տեխնիկական ասպարեզներում, որոնց անդրադառնում է գնահատումը, ինչպես նաև գնահատում իրականացնելու փորձ՝ ներառյալ կիրառման ենթակա առանձնահատուկ մեթոդաբանություններում:

45. Արտակարգ իրավիճակներում ունեցած փորձը նույնպես կարևոր է՝ հակաականային գործողությունների ծրագրերը գնահատելիս այն երկրներում, որոնք հակամարտության կամ հակամարտությանն անմիջապես հաջորդող ժամանակաշրջանում են գտնվում կամ էլ քաղաքական ծայրահեղ անկայունության պայմաններում:

46. Եթե իրագործելի է, ապա գնահատման թիմերը պետք է ներառեն մասնագետներ այն երկրներից կամ շրջաններից, որտեղ տեղի է ունենում գնահատումը: Պետք է նաև ապահովել, որպեսզի կանանց կարիքներն ամբողջությամբ ընդգրկված լինեն գնահատման մեջ, և որոշակի հանգամանքներում դա կարող է պահանջել որևէ կնոջ մասնակցությունը գնահատման թիմում:

47. Երբ գնահատողներն ընտրված կլինեն, ապա պետք է փոխադարձ հարգանքով և վստահությամբ բնորոշել հարաբերությունները նրանց և պատվիրող կառույցի միջև: Կողմերի համատեղ պարտավորությունները պետք է ձևակերպվեն գրավոր համաձայնագրում, որը ներառում է տեխնիկական առաջադրանքը, և՝

1) ֆինանսական ապահովումը.

2) ժամանակային ծավալը.

3) ներգրավված անձնակազմը և նրանց գործողությունները.

4) թողարկման ենթակա զեկույցներ և այլ ապրանքներ ու դրանց բովանդակությունը.

5) նախաձեռնվելիք գործողությունները.

6) ընթացակարգերը, որոնց պետք է հետևել.

7) գնահատման արդյունքների նախատեսված կիրառումը՝ ներառյալ գաղտնիության խնդիրները և մտավոր սեփականության իրավունքները:

48. Հնարավորության դեպքում գնահատողներից խնդրվում է և ժամանակ է պետք նրանց հատկացնել, որպեսզի նրանք գնահատման աշխատանքային պլան կամ մեկնարկի զեկույց պատրաստեն՝ նախքան տեխնիկական առաջադրանքը հաստատելու կամ անհրաժեշտության դեպքում դրանում լրամշակումների կատարումն առաջարկելու ուղղությամբ որևէ առաքելություն ստանձնելը՝ սկզբնական հանդիպումների, նախագծային փաստաթղթերի նախնական վերանայման և տվյալների, բյուջեի, այցելության երկրներում անվտանգության հիման վրա:

49. Տեխնիկական առաջադրանքում առաջարկվող լրամշակումները պետք է քննարկվեն պատվիրող մարմնի հետ, որն էլ գրավոր կերպով պետք է հավանություն տա բոլոր համաձայնեցված փոփոխություններին:

50. Գնահատման աշխատանքային պլանի մշակումը ներառում է սկզբնական հարցազրույցների իրականացում, փաստաթղթերի և վավերագրական հետազոտություններ ու

նախնական վերլուծում: Աշխատանքային պլանը ժամանակի զգալի ներդրում է պահանջում, սակայն մանրակրկիտ կերպով մշակված աշխատանքային պլանը կարող է բավականաչափ տեղեկություններ ապահովել՝ հնարավորություն տալով վերլուծական աշխատանք կատարել նույնիսկ նախքան դաշտային այցելություն կատարելը:

51. Չնայած նրան, որ աշխատանքային պլանները կարելի է տարբեր կերպով նախագծել՝ շեշտը դնելով այն կողմերի վրա, որոնք հատուկ են իրականացվող գնահատման տեսակին, այնուամենայնիվ հետևյալ հիմնական տարրերը պետք է սովորաբար ընդգրկված լինեն՝

1) նախագծի դիզայնի և ծավալի ակնարկ.

2) պատմական, տեղական, տարածաշրջանային և ազգային համատեքստի վերաբերյալ վերլուծական մեկնաբանություններ.

3) գնահատման տեղեկատվության օգտագործողների և գնահատման շեշտադրման հետևանքների սահմանում.

4) գնահատման նպատակների ուսումնասիրման ենթակա խնդիրների վերլուծում.

5) մեթոդաբանության և տեղեկատվության աղբյուրների վերաբերյալ վերլուծական մեկնաբանություն.

6) գնահատման մասնակիցները և նրանց գործողությունները.

7) աշխատանքի ծրագրավորման մանրամասներ.

8) զեկուցման մանրամասներ:

52. Գնահատողները պետք է ապահովեն գնահատման ամբողջ ընթացքի անկեղծությունն ու շիտակությունը: Նրանք պատասխանատու են նաև ապահովելու, որ գնահատումները լինեն անկախ, անկողմնակալ և ճշգրիտ:

53. Գնահատողները պետք է առավելագույն տևողությամբ ծանուցում ապահովեն, ժամանակի պահանջները հասցնեն նվազագույնի և հարգեն մարդկանց գաղտնիության իրավունքը:

54. Սովորաբար գնահատողները պետք է խուսափեն անհատներին գնահատելուց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա էական է՝ ըմբռնելու նախագծի հաջողության կամ հակառակի նախապատմությունը:

## XI. ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

55. Գնահատման զեկույցները պետք է տրամաբանորեն շարադրված լինեն՝ պարունակելով վկայությունների վրա հիմնված բացահայտումներ, եզրահանգումներ, դասեր և առաջարկություններ, և պետք է զերծ լինեն այնպիսի տեղեկություններից, որոնք չեն համապատասխանում ընդհանուր վերլուծմանը: Զեկույցը պետք է ներկայացվի այնպիսի ձևով, որը տեղեկությունները դարձնի հասանելի և ըմբռնելի, շարադրելով՝

1) գնահատման նպատակը.

2) ինչ է կոնկրետ գնահատվել.

3) ինչպես է նախագծվել և իրականացվել գնահատումը.

4) ինչպիսի վկայություններ են հայտնաբերվել.

5) ինչպես են այդ վկայությունները վերլուծվել.

6) ինչպիսի եզրահանգումներ են կատարվել.

7) ինչպիսի առաջարկություններ են արվել.

8) ինչ դասեր են քաղվել:

56. Գնահատման զեկույցը պետք է ունենա համառոտ ամփոփագիր, որը ներառում է՝

1) գնահատման սուբյեկտի հակիրճ նկարագիրը.

2) գնահատման նպատակը.

3) գնահատման խնդիրները.

4) զեկույցի նախատեսված լսարանը.

5) կիրառված մեթոդաբանության կարճ նկարագիր, այդ թվում նաև՝ մեթոդաբանության ընտրության տրամաբանական բացատրությունը, օգտագործված տվյալների աղբյուրները, կիրառված տվյալների հավաքագրման և վերլուծման մեթոդները և նշանակալից սահմանափակումները.

6) էական բացահայտումները և եզրահանգումները.

7) հիմնական առաջարկությունները:

57. Զեկույցը պետք է նկարագրի, թե ովքեր կան ներգրավված, նրանց դերակատարումը և ներդրումը գնահատման ենթակա սուբյեկտին, ներառյալ ֆինանսական ռեսուրսները, իրեղեն ներդրումները, տեխնիկական աջակցությունը, մասնակցությունը, անձնակազմի ժամանակը, վերապատրաստումը, առաջնորդությունը, քարոզումը, լոբբինգը և առաջնային շահագրգիռ կողմերի ցանկացած ներդրում, օրինակ՝ համայնքների:

58. Գնահատման զեկույցը պետք է բացատրություն ապահովի գնահատողների կողմից կիրառված գնահատման չափանիշների վերաբերյալ: Կարևոր է նաև, որ արժեքավոր որոշումների հիմքերը թափանցիկ լինեն: Որևէ կոնկրետ չափանիշ չկիրառելու հիմնավորումները պետք է բացատրվեն զեկույցում, ինչպես նաև չափանիշների կիրառման վերաբերյալ սահմանափակումները:

59. Գործողության կիրառված չափորոշիչները կամ հենանիշերը նույնպես պետք է նկարագրվեն:

60. Մեթոդաբանության նկարագիրը պետք է զետեղված լինի զեկույցում՝ օգտագործողներին հնարավորություն տալով հանգել իրենց սեփական եզրակացություններին տվյալների որակի վերաբերյալ: Այն պետք է ներառի՝

1) տվյալների աղբյուրները.

2) տվյալների հավաքագրման մեթոդների նկարագիրը և վերլուծությունը.

3) նմուշների նկարագիրը (ներկայացվելիք տարածքներ և բնակչություն, ընտրության հիմնավորում և մեխանիզմներ, ընտրված համարներ, նմուշի սահմանափակումներ).

4) հղման ցուցանիշները (նախկին ցուցանիշներ, ազգային վիճակագրություն և այլն).

5) գնահատման թիմը՝ ներառյալ թիմի անհատ անդամների ներգրավումը.

6) գնահատման պլանը.

7) հիմնական սահմանափակումները:

61. Հավելվածները պետք է ընդգրկեն հետևյալը՝

1) տվյալների հավաքագրման գործիքները (հետազոտումներ, ստուգիչ ցուցակներ և այլն).

2) տվյալների որակի ապահովման համակարգը.

3) սահմանափակումների առավել մանրամասն քննարկումը՝ ըստ անհրաժեշտության:

62. Գնահատման սուբյեկտների ձեռքբերումների և խոչընդոտների պատճառները, հատկապես սահմանափակող և գործադրող գործոնները, պետք է սահմանվեն: Զեկույցը չպետք է պարզապես իրագործման և արդյունքների նկարագիրն ապահովի, այլև խորը թաքնված պատճառների, սահմանափակումների, ուժեղ կողմերի, որոնց հիման վրա կարելի է կառուցել, և հնարավորությունների վերլուծություն: Ձեռքբերումներին և խոչընդոտներին նպաստող արտաքին գործոնները պետք է սահմանվեն և վերլուծվեն:

63. Գնահատման թիմի անդամները պետք է հնարավորություն ունենան իրենք իրենց տարանջատելու առանձին որոշումներից և առաջարկություններից: Թիմի կազմում որևէ կարծիքի վերաբերյալ ցանկացած չլուծված տարաձայնություններ պետք է արձանագրվեն զեկույցում:

64. Գնահատման զեկույցները պետք է ամբողջությամբ կամ մասամբ տրամադրվեն շահագրգիռ կողմերին և հասանելի պետք է լինեն հակասականային գործողությունների համայնքի այլ անդամներին:

65. Կոմերցիայի տեսանկյունից գաղտնի տեղեկությունները և կոնֆիդենցիալ խնդիրները պետք է առանձին ներկայացվեն պատվիրող մարմնին՝ ապահովելով հիմնական զեկույցի հնարավորինս լայն տարածումը: Եթե գնահատողները բացահայտում են կեղծարարության, սխալ վարքագծի, իշխանության չարաշահման կամ մարդու իրավունքների ոտնահարման հուսալի վկայություն, ապա նրանք գաղտնի կերպով պետք է այդ խնդիրը փոխանցեն պատվիրող մարմնին և (կամ) համապատասխան կառույցներին:

66. Եթե պատվիրող մարմինը չի ցանկանում գնահատման զեկույցը տրամադրել շահագրգիռ կողմերին կամ էլ կատարյալ դեպքում փոխանցել այն հանրային տիրույթ, ապա պետք է հաշվի առնել ամփոփագրի տրամադրումը (որն էլ այդ դեպքում պետք է մշակվի՝ հենց այդ գաղափարը մտքում ունենալով): Եթե ոչ ամբողջական զեկույցը, ոչ էլ ամփոփագիրը չեն տարածվելու, ապա գնահատողները կարող են մշակել գնահատման ստանդարտ հակիրճ նկարագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 29
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 23-ի N 454 -Ն որոշման

# ԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՅԹՈՒՅԻԿ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Սույն չափորոշիչը սկզբունքներ և ուղեցույցներ է սահմանում ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ) արդյունավետ գնահատման, պլանավորման, իրականացման, կառավարման և մոնիթորինգի համար:

## Ի. ԱՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

2. Ականների/ՊՊՄ վտանգի իրազեկումը (ԱՎԻ) վերաբերում է գործողություններին, որոնք տեղեկացվածությունը բարձրացնելու և ապահով վարքագիծ երաշխավորելու միջոցով միտված են նվազեցնելու ականներից/ՊՊՄ-ներից մահվան կամ վնասվածքի ռիսկը: Այդ գործողություններն են՝ վտանգի ենթարկված համայնքների հետ տեղեկատվության փոխանակումը, թիրախային խմբերին համապատասխան հաղորդագրությունների հասցնելը, ինչպես նաև հակաականային գործողություններում և ռիսկի կառավարման գործում համայնքի մասնակցության ապահովումը:

3. ԱՎԻ-ն պետք է երաշխավորի, որ վտանգի ենթարկված համայնքի տղամարդիկ, կանայք և երեխաները տեղեկացված են ականների/ՊՊՄ-ների վտանգի մասին և նրանց խրախուսվում է դրսևորել այնպիսի վարքագիծ, որը կնվազեցնի ռիսկը: Նպատակը ռիսկը նվազեցնելն է՝ հասցնելով այնպիսի մակարդակի, որ մարդիկ կարողանան ապրել ապահով, ինչպես նաև միջավայրը վերականգնելն է, որտեղ տնտեսական և սոցիալական զարգացումը կարող է ընթանալ առանց ականապատվածություն առաջացնող կաշկանդվածության:

4. ԱՎԻ-ն հակաականային գործողությունների բաղկացուցիչ մասն է, բայց այն երբեք միայնակ իրականացվող գործողություն չէ: Որտեղ հնարավոր է, ԱՎԻ-ն պետք է իրականացվի

այլ հակաականային գործողությունների հետ միասին: Ծրագրերը և նախագծերը պետք է իրականացվեն արտակարգ իրավիճակներում, անցումային և զարգացման իրավիճակներում: Սակայն հնարավոր են դեպքեր, երբ ԱՎԻ ծրագրերն իրականացվում են միայնակ:

## II. ԱՎԻ ԴԵՐԸ ՀԱԿԱԱԿԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

5. ԱՎԻ-ն կարող է էական դեր խաղալ այն առումով, որ այն ապահովում է տեղեկատվության փոխանցումը համայնքի անդամներին և հարաբերություններ է կառուցում համայնքի անդամների հետ:

6. ԱՎԻ անվտանգության հաղորդագրությունների փոխանցումը վերաբերում է այն տեղեկատվությանը և կրթական գործողություններին, որոնք նպատակ են հետապնդում նվազեցնել ականներից/ՊՊՄ-ներից պատճառված վնասները և մահվան դեպքերը՝ քարոզելով անվտանգ վարքագիծ: Հաղորդագրությունները կարող են տարածվել միջանձնային հարաբերությունների ընթացքում, մամուլի միջոցով, ինչպես նաև բուկլետների միջոցով:

7. Հետկոնֆլիկտային արտակարգ իրավիճակներում, ժամանակի սղության և պատշաճ տեղեկատվության բացակայության պատճառով, հանրային խողովակներով տեղեկատվության փոխանցումը կարող է լինել ամենաարդյունավետ միջոցը: Առավել կայուն իրավիճակներում հաղորդագրության փոխանցումը կարող է իրականացվել առավել ընդգրկուն ռիսկի նվազեցման ռազմավարության շրջանակներում: Սա կարող է իրականացվել հանրային գործողություններով, դպրոցներում և այլ վայրերում միջոցառումներ կազմակերպելու միջոցով:

8. Ականների/ՊՊՄ վտանգի, վտանգավոր տարածքների, քաղաքացիական բնակչության վրա ականների/ՊՊՄ ազդեցության՝ ներառյալ պատահարների վերաբերյալ դեպքերը, վտանգի և ապահով վարքագծի մասին տեղեկատվությունը և զոհերին աջակցության մասին տեղեկատվությունը պետք է հավաքվի վտանգի ենթարկված համայնքներից և այլ աղբյուրներից: Տեղեկատվությունը պետք է օգտագործվի հասկանալու համար վտանգի ազդեցության աստիճանը և դրա ազդեցությունը՝ առանձնացնելու համար թիրախային

խմբերը, աջակցելու համար այլ հակաականային գործողությունների իրականացմանը, մասնավորապես, տեխնիկական, ոչ տեխնիկական հետազոտությունը, մաքրումը և զոհերին աջակցությունը: Տեղեկատվությունը նաև պետք է օգտագործվի հակաականային գործողությունների ազդեցությունը գնահատելու համար:

9. Համայնքային կապը սովորաբար վերաբերում է այն գործընթացներին, տեխնիկաներին կամ տեղեկատվության փոխանակմանը, որը խրախուսում է վտանգի ենթարկված համայնքների ճանաչումը, դրանց արժեքների գնահատումը և առաջնահերթությունների սահմանումը: Գործընթացը նաև օգնում է համայնքի անդամներին հասկանալու հակաականային գործողությունների իմաստը և նշանակությունը, ինչպես նաև ուղղորդելու ԱՎԻ-ն՝ ըստ իրենց պահանջմունքների: Համայնքի հետ կապն իրականացվում է պետական իշխանության մարմինների, ակամազերծող իշխանությունների, բարեգործական և զարգացման կազմակերպությունների և համայնքի բնակչության միջև տեղեկատվության փոխանակման միջոցով:

10. Համայնքի հետ կապը պետք է երաշխավորի, որ համայնքի անդամները ներգրավված են իրենց ռիսկերը և հակաականային գործողությունների իրենց առաջնահերթությունները հատկանշելու գործընթացում: Այն կարող է աջակցել նաև համայնքներին՝ մշակելու ռիսկերի նվազեցման իրենց տեղական ծրագրերը: Համայնքի հետ կապը պետք է նաև երաշխավորի, որ համայնքի անդամները ներգրավված են հակաականային գործողությունների մշակման, իրականացման կամ մոնիթորինգի մշակման գործընթացում:

11. Համայնքի հետ կապը հատկանշական է ԱՎԻ համար, սակայն այն էական է հակաականային գործողությունների բոլոր փուլերի համար: Հակաականային գործողություններում ներգրավված անձինք կարող են կազմակերպել ԱՎԻ, սակայն այն կարող է իրականացվել նաև առանձին խմբերի կողմից: Համայնքի հետ կապը պետք է իրականացվի

միայն վերապատրաստում անցած անձանց կողմից՝ ապահովելու համար, որ համայնքի հետ աշխատելիս ցուցաբերվում է միասնական մոտեցում:

## III. ԱՎԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ և ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

12. Ականազերծման գործողությունները ներառում են ականների/ՊՊՄ հետազոտությունը, նշագրումը, և մաքրումը: ԱՎԻ-ն կարող է աջակցել այս բոլոր երեք ուղղություններին, ինչպես նաև ապահովել համայնքի աջակցությունն ականազերծման գործընթացում: Ոչ տեխնիկական և տեխնիկական հետազոտության նպատակներով ԱՎԻ խմբերը, հիմնվելով համայնքի և այլ առանցքային տեղեկատվության աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա, կարող են՝

1) հայտնաբերել վտանգավոր տարածքները.

2) բնորոշել գոյություն ունեցող վտանգների տեսակները.

3) հասկանալ, թե ինչպես են ականները/ՊՊՄ-ներն ազդում համայնքի կյանքի և բարեկեցության վրա.

4) օգնել մաքրման և նշագրման համար համայնքի առաջնահերթությունների ցանկն ստեղծելու համար:

13. Նշագրման նպատակներով ԱՎԻ խմբերը կարող են՝

1) հավաքել և տարածել տեղական զգուշացնող նշանների մասին տեղեկատվությունը.

2) երաշխավորել, որ համայնքը հասկանում և հետևում է ականների մասին վկայող նշաններին.

3) աջակցել նշագրման առաջնահերթությունների համայնքի ցուցակի կազմման գործում:

14. Ականների/ՊՊՄ նպատակներով ԱՎԻ խմբերը կարող են՝

1) տեղեկացնել համայնքին ականազերծող խմբերի ժամանման մասին.

2) տեղեկացնել համայնքին անվտանգության ընթացակարգերի մասին, որոնք անհրաժեշտ է կիրառել ականազերծման ընթացքում.

3) տեղեկացնել կանանց, տղամարդկանց և երեխաներին մաքրված տարածքների և վտանգավոր հանդիսացող տարածքների մասին.

4) արագացնել մաքրված տարածքների հանձնման գործընթացը՝ ներառյալ իրականացնել վստահության ամրապնդման միջոցառումներ՝ փաստելու համար, որ տարածքն այլևս անվտանգ է.

5) որոշ ժամանակ անց կատարել այցեր՝ համոզվելու համար, որ տարածքն օգտագործվում է ակնկալվող շահառուների կողմից:

15. Պայթուցիկ նյութերի ոչնչացման իմաստով՝ ԱՎԻ խմբերը կարող են՝

1) հավաքել և զեկուցել ՊՊՄ-ների անմիջական կատարման ենթակա հանձնարարությունների մասին տեղեկատվությունը.

2) աջակցել անմիջական կատարման ենթակա հանձնարարությունների վերաբերյալ զեկուցման համակարգի զարգացումը.

3) աջակցել ՊԶՄ ոչնչացման խմբերի աշխատանքներին.

4) երաշխավորել, որ ՊԶՄ ոչնչացման խմբերը ժամանակին են արձագանքում համայնքների հաղորդագրություններին:

## IV. ԱՎԻ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

16. Տուժածներին օժանդակությունը ներառում է ականադաշտերի փրկարարական և շտապ բժշկական օգնությունը, ֆիզիկական վերականգնումը, հոգեբանական աջակցությունը և ականների/ՊՊՄ-ների պայթյունից ամբողջ մնացած անձանց և հաշմանդամների սոցիալ-տնտեսական վերաինտեգրումը: Այս առումով ԱՎԻ խմբերը կարող են՝

1) աջակցել ականների/ՊՊՄ տուժածների մասին տեղեկատվության հավաքման գործընթացին.

2) բացահայտել տուժածների աջակցության ազգային և տեղական կարողությունները, ինչպես նաև այն, թե ինչ պայմաններով է օժանդակությունը հասանելի.

3) բացահայտել աջակցության կարիք ունեցող անձանց.

4) աջակցության կարիք ունեցող անձանց տեղեկատվություն տրամադրել օժանդակության հասանելի լինելու մասին.

5) կապվել ֆիզիկական վերականգնողական կենտրոնների հետ՝ երաշխավորելու համար, որ աջակցությունը տրամադրվում է.

6) անհրաժեշտության դեպքում՝ կազմակերպել տուժածի և նրա ընտանիքի անդամների տեղափոխումը դեպի վերականգնողական կենտրոն և հետադարձ.

7) քննարկել իրենց մոտ տուժածներին աշխատանքի ընդունելու հնարավորությունները:

## V. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՐԻՔՆԵՐԻ, ԽՈՑԵԼԻ ՏԵՂԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

17. ԱՎԻ-ն պետք է հիմնված լինի կարիքների և կարողությունների պատշաճ ուսումնասիրության վրա: ԱՎԻ կարիքների գնահատման նպատակն է բացահայտել, վերլուծել և առաջնահերթություն տալ ականների/ՊՊՄ ռիսկին, գնահատել վտանգի ենթարկված համայնքներում կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների խոցելիությունը և կարողությունները, ինչպես նաև բացահայտել ԱՎԻ իրականացման տարբերակները:

18. Կարիքների գնահատումը և տեղեկատվության հավաքումը պետք է իրականացվի համայնքի անդամների հետ փոխհամաձայնեցված կարգով: Արդյունքները պետք է հաղորդվեն նաև համայնքի անդամներին: Դա, մասնավորապես, վերաբերում է այն տեղեկատվությանը, որը հավաքվել է համայնքից:

19. Ցանկացած կարիքների գնահատման արդյունքներ պետք է զեկուցվեն ԱԳԱՄ-ին, որն այն պետք է հաղորդի հակաականային գործողությունների մեջ ընդգրկված այլ անձանց:

20. Չնայած նրան, որ կարիքների գնահատումը նախորդում է ԱՎԻ պլանավորմանը և իրականացմանը, այն միայնակ իրականացվող գործողություն չէ և պետք է իրականացվի պարբերաբար: Յուրաքանչյուր ականապատված տարածքում այն պետք է վերանայի համայնքի տարբեր կարիքներ, խոցելիություններ և ակնկալիքներ:

21. Տեղեկատվության հավաքման և վերլուծության գործընթացը պետք է լինի թափանցիկ: Որտեղ հնարավոր է համայնքի ներգրավվածությունը կարիքների գնահատման գործընթացում պետք է երաշխավորվի:

22. Կարիքների գնահատում իրականացնող անձինք պետք է պատշաճ կերպով պատրաստված լինեն և բավարար որակավորում ունենան: Կարիքների գնահատման վարժանքները պետք է երաշխավորեն, որ կարիքների գնահատում իրականացնող անձինք՝

1) ունակ են հասկանալու տեղեկատվության հավաքման և վերլուծության պատճառները.

2) տեղյակ են անվտանգության և աշխատանքի հիգիենայի չափորոշիչներին, որոնք կկիրառվեն գնահատումներ իրականացնելիս.

3) ստանում են ընդգրկուն և շարունակական վարժանքներ, մասնավորապես, տեղեկատվության հավաքման և կարիքների գնահատման նորմերին և էթիկայի կանոններին համապատասխան:

## VI. ԱՎԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

23. ԱՎԻ կարիքների գնահատման ընթացքում հավաքման ենթակա տեղեկատվությունն ապահովում է այն դրույթները, որոնց հիման վրա ծրագիրը պետք է նախագծվի: Հավաքված տեղեկատվությունը պետք է հնարավորություն ընձեռի բացահայտել հետևյալը՝

1) թիրախային խմբերը՝ սոցիալական և աշխարհագրական (ականների/ՊՊՄ զոհերի վերաբերյալ տեղեկատվություն հավաքելով).

2) վտանգի ենթարկված տարածքների և ականների/ՊՊՄ-ների մասին տեղեկատվությունը (օգտագործված սարքավորումների տեսակը, կասկածվող տարածքների բնույթը, ցանկացած նշագրումներ).

3) աշխատանքի վայրերը (հավաքելով տեղեկատվություն այն մասին, թե որտեղ են մարդիկ վնասվել, որտեղ է ռիսկն առավել մեծ, որտեղ է տեղի ունենում ռիսկ պարունակող վարքագիծը).

4) հաղորդագրությունները և հետագա գործողությունները՝ ըստ թիրախային խմբերի (գնահատելով, թե ինչպես են մարդիկ վնասվում և ինչպես են նրանք ռիսկի ենթարկվում և ինչու).

5) ԱՎԻ մոտեցումները և մեթոդոլոգիաները, որոնք ամենայն հավանականությամբ կհանգեցնեն վարքագծի փոփոխության: Համայնքի մասնակցությունը պետք է ապահովվի գոյություն ունեցող ցանկացած տեղական ռազմավարության գնահատման մեջ.

6) հաղորդակցության խողովակները և եղանակները, որոնցով թիրախային խմբերը հաղորդակցվում են և սովորում են.

7) ինստիտուցիոնալ կարգավորումները և գործընկերությունները՝ ԱՎԻ հաղորդագրությունները և հրատապ արձագանքն ապահովելու համար.

8) առկա ռեսուրսները և դրանց տեղաբաշխումը.

9) ծրագրի կամ նախագծի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ժամանակահատվածը (ականների/ՊՊՄ-ների վտանգի բնույթի և չափերի մասին տեղեկատվություն հավաքելով):

## VII. ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

24. ԱՎԻ կարիքների գնահատում իրականացնողները, որտեղ հնարավոր է, պետք է հիմնվեն առկա տեղեկատվության վրա:

25. Տեղեկատվություն հավաքող անձնակազմը պետք է հատուկ վարժանքներ անցած լինի՝ ներառյալ տեղեկատվության հավաքման էթիկայի վերաբերյալ: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ այս գործընթացը չդառնա մեխանիկական գործընթաց, այլ այն հնարավորության է տալիս ծավալել բաց երկխոսություն՝ հնարավորություն տալով հարցազրույց անցնողներին խոսել բնականորեն:

26. ԱՎԻ կազմակերպությունները չպետք է ակնկալեն այնպիսի արդյունքներ, որոնց իրականացումն անհնարին է: Անհրաժեշտ է ուշադիր լինել, որ նրանք սին հույսեր չարթնացնեն տարածքի մաքրվածության վերաբերյալ: ԱՎԻ կազմակերպությունները պետք է շեշտեն, որ տեղեկատվությունը հավաքվում է համայնքի կարիքները գնահատելու համար:

27. Ականների/ՊՊՄ տուժածներն իրավունք ունեն պահպանելու իրենց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, ինչպես նաև իրավունք ունեն ընդգրկվելու իրենց վերաբերող ծրագրերում և որոշումների ընդունմանը: Այս իրավունքները բոլոր դեպքերում պետք է հարգվեն:

28. ԱՎԻ կարիքների գնահատում իրականացնող կազմակերպություններն ամբողջ հավաքված տեղեկատվությունը պետք է տրամադրեն ԱԳԱՄ-ին՝ գաղտնիության ապահովման պայմանով: Տեղեկատվությունը պետք է մուտքագրվի հակաականային գործողությունների տեղեկատվական համակարգ՝ այլ հակաականային գործողությունների ծրագրին աջակցելու նպատակով: ԱԳԱՄ-ն իր հերթին ստացված տեղեկատվությունը, գաղտնիության ապահովման պայմանով, կհաղորդի ականազերծող կազմակերպություններին և այլ մարմիններին, որոնք ընդգրկված են հակաականային գործողություններում: Որտեղ հնարավոր է, այն պետք է ներառի ցանկացած կարիքի գնահատման վերլուծություն:

## VIII. ԱՎԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՔՈՒՄԸ

29. Անվտանգության հաղորդագրությունները ԱՎԻ գործողությունների անկյունաքարն են հանդիսանում: Այդպիսի հաղորդագրությունների մշակումն ու տարածումը և դրանց ազդեցության գնահատումը պետք է հանդիսանա պատշաճ կերպով մշակված ռազմավարության և գործընթացի արդյունք: Ռիսկային վարքագծին, թիրախային խմբերին, հաղորդագրություններին արձագանքելու համընդհանուր ընդունված մոտեցումները միշտ չէ, որ ԱՎԻ տեղ հասցնելու լավագույն տարբերակներն են:

30. ԱՎԻ շրջանակներում իրականացվող ցանկացած տեղեկատվության փոխանակում պետք է հիմնված լինի պատշաճ կերպով պլանավորված ռազմավարության վրա, որը միտված է կոնկրետ թիրախային խմբերի, և որը սոցիալական ու մշակութային առումներով համապատասխանում է միջավայրին: ԱՎԻ ծրագիրը կամ նախագիծը չպետք է ենթադրի, որ կանայք և երեխաներն առավել շատ են ռիսկի ենթակա: Հետևյալ տարրերը պետք է ներառվեն ԱՎԻ հաղորդակցման ռազմավարության մեջ՝

1) արձագանքման ենթակա ռիսկային վարքագիծ.

2) թիրախային խմբեր.

3) անվտանգության հաղորդագրություններ.

4) հաղորդակցման ուղիներ.

5) տարածման եղանակները:

## IX. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ

31. Փոխանցման ենթակա հաղորդագրությունները կախված են թիրախային լսարանից, խրախուսման ենթակա վարքագծից և այլ հանգամանքներից, որոնք ամենայն հավանականությամբ կազդեն լսարանի կողմից պատշաճ վարքագիծ դրսևորելու վրա: Հաղորդագրությունները պետք է մշակութային, լեզվային և սոցիալական առումներով պատշաճ լինեն:

Հաղորդագրությունները պետք է հաստատողական բնույթի լինեն, քանի որ մարդիկ պետք է հստակ իմանան, թե ինչ գործողություններ պետք է կատարեն< և որ այդ գործողությունը կատարելով նրանք կփրկեն իրենց և իրենց ընտանիքի անդամների կյանքը: Հաղորդագրությունը չպետք է կարճ լինի, սակայն այն պետք է հստակ ձևակերպված լինի:

32. Բոլոր հաղորդագրությունները և առաջարկվող առաքման եղանակները պետք է փորձարկվեն՝ մինչև դրանց ամփոփումը:

33. Փորձարկումը պետք է իրականացվի թիրախային լսարանի մեջ: Եթե թիրախային լսարանը բաղկացած է կոնկրետ էթնիկ խմբի ներկայացուցիչ տղամարդ ֆերմերներից, այդպիսի մարդկանց հետ պետք է իրականացվի նախափորձարկում: Փորձարկումը կարող է լինել բարդության տարբեր աստիճանների և տարբեր արժեքի: Այն չպետք է երկար տևի: Փորձարկումը պետք է երաշխավորի, որ հաղորդագրությունները և նյութերը՝

1) հասկանալի են.

2) սոցիալապես ընդունելի են.

3) համապատասխան են.

4) իրատեսական են:

## X.ԱՎԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ և ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

34. ԱՎԻ յուրաքանչյուր ծրագրի կամ նախագծի համար հաղորդագրությունները և հաղորդագրությունների առաքումը պետք է ենթարկվի մոնիթորինգի՝ դրանց արդյունավետությունը երաշխավորելու համար: Մոնիթորինգի համակարգը պետք է ստեղծվի պլանավորման փուլում: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է գնահատել, թե արդյոք հաղորդագրությունները՝

1) հասնում են իրենց թիրախային լսարաններին.

2) հասկանալի են և ընդունելի.

3) արդյոք թիրախային լսարանը գործում է դրանց համապատասխան:

## XI.ՄԱՄՈՒԼԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ

35. ԱՎԻ աջակցության նպատակով մամուլի և նյութերի ձևավորման անհրաժեշտության հարցը քննարկելիս գլխավոր հարցը պետք է լինի այն, թե ինչպես ճիշտ հաղորդագրությունը ճիշտ լեզվով հասցնել ճիշտ անձի: Կարող են լինել դեպքեր, երբ ծրագրի կամ նախագծի առումով նպատակահարմար է մշակել տպագիր նյութեր (օրինակ՝ բուկլետներ): Տպագիր նյութերը, օրինակ, կարող են օգտակար հիշեցումներ լինել՝ այլ միջոցների հետ համատեղ օգտագործելիս:

36. Նույն կամ տարբեր հաղորդագրությունները և պատկերները կարող են օգտագործվել յուրաքանչյուր ԱՎԻ համար: Այլ համատեքստից նյութերի ընդունումը որոշակի դեպքերում կարող է ոչ պատշաճ կամ շեղող լինել, հետևաբար, մինչև տարածումը այն պետք է պատշաճ ուսումնասիրվի:

37. Ինչպես հաղորդագրությունների դեպքում ԱՎԻ նյութերը և մամուլը մինչև դրանց ամփոփումը պետք է փորձարկվեն: Թիրախային լսարանի ընտրված ներկայացուցիչների հետ պետք է անցկացվեն հարցազրույցներ՝ քննարկելու համար առաջարկվող մոտեցումը: Նյութերը չպետք է ամփոփվեն մինչև դրանց դաշտային պայմաններում փորձարկումը, քանի որ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն կարող է առաջանալ: Հաղորդագրության վերաբերյալ նշված դրույթներին համահունչ ԱՎԻ նյութերի փորձարկումը պետք է ստուգի, թե արդյոք դիզայնը հասկանալի է, սոցիալապես ընդունելի և համոզիչ:

## XII.ԱՎԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

38. Արտակարգ իրավիճակների պայմաններում ԱՎԻ-ն ուղղված է ակամների/ՊՊՄ վտանգների վերաբերյալ նոր լուրջ ռիսկերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: ԱՎԻ նպատակն է հնարավորինս սեղմ ժամկետում անվտանգ վարքագիծ ձևավորել պոտենցիալ ռիսկի տակ գտնվող հնարավորինս մեծ թվով անձանց, մասնավորապես<

երեխաների շրջանում: Դա կարող է կրել համապետական կամ նեղ տեղայնացված բնույթ~ ելնելով արտակարգ իրավիճակի տևողությունից և վայրից:

39. ԱՎԻ շրջանակներում պետք է տեղի ունենա հատուկ խմբերի հետ տեղեկատվության փոխանակում, որը կնպաստի ռիսկային համայնքներում կայուն վարվեցողական փոփոխություններին: Արտակարգ իրավիճակների պայմաններում ժամանակի սղության պատճառով հաղորդակցությունը հիմնականում իրականացվում է միակողմանիորեն: Դա նպատակ է հետապնդում հնարավոր սեղմ ժամանակահատվածում ռիսկային ոլորտում գտնվող առավելագույն թվով անձանց ապահովել պայթուցիկ նյութերի և անվտանգության հիմնական կանոնների վերաբերյալ տեղեկատվությամբ: Արտակարգ իրավիճակի պայմաններում բնակչության տարհանումը կամ շարժը ռիսկային գործոններ են: Արտակարգ իրավիճակի պայմանների վերացումից հետո կարող է պահանջվել գնահատում~ արտակարգ իրավիճակին հաջորդող շրջանի համար նոր ԱՎԻ մոտեցում մշակելու համար:

40. Արտակարգ իրավիճակների պայմաններում հաղորդագրությունները պետք է լինեն ընդհանուր բնույթի: Հատուկ հաղորդագրությունների տարածումը նման դեպքերում կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են~ թիրախային լսարանը, ռիսկի ենթարկվելու տեսակները և այլն: Անհրաժեշտ է պարզել, թե ինչ տեսակի պայթուցիկ նյութեր են սպառնում անձանց անվտանգությանը: Օրինակ՝ եթե ականներն առավել բարձր ռիսկայնության են, ապա անձանց համար կարող է վտանգ ներկայացնել դրանց վրայով քայլելը, կամ անտեսանելի ականային թելերի վնասումը, անգամ առանց ականներին դիպչելու: Ուստի, ջանքերը պետք է կենտրոնացվեն վտանգի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես, պոտենցիալ վտանգ ներկայացնող վտանգավոր տարածքների ճանաչմամբ:

## XIII.ԱՎԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

41. Դպրոցական համակարգում և ուսումնական ծրագրերում ԱՎԻ ինտեգրումը լայն տարածում ունի հատկապես այն տարածքներում, որտեղ առկա է ականների կամ չգործարկված պայթուցիկ նյութերի տևական վտանգ: Այս մեթոդի միջոցով բարձրացվում է դպրոցահասակ երեխաների իրազեկվածության մակարդակը: Տեղեկատվությունը պետք է համապատասխանի տարբեր տարիքային խմբերի: ԱՎԻ-ն չի դասավանդվում որպես առանձին ուսումնական առարկա, բայց ներառվում է այլ առարկաների ուսումնական ծրագրում կամ դասավանդվում է ուսումնական ծրագրից դուրս՝ որպես լրացուցիչ թեմա:

42. ԱՎԻ-ն դպրոցական ուսումնական ծրագրերին ինտեգրումը կամ որպես լրացուցիչ թեմա դասավանդումը պետք է տարբերվի ԱՎԻ թիմերի կողմից դպրոցներում իրականացվող իրազեկվածության բարձրացման միջոցառումներից: Դպրոցական համակարգում ԱՎԻ ինտեգրման գործընթացն իրականացնելիս անհրաժեշտ է ուսումնասիրել, թե արդյոք նման անհրաժեշտության կա բոլոր դպրոցներում, թե դա պետք է տարածվի առավել ռիսկային համայնքների դպրոցների ուսումնական ծրագրերի վրա: Ինտեգրման ընթացքում նաև պետք է հաշվի առնվեն տեղական իշխանությունների, ինչպես նաև դպրոցական համակարգերի նման գործընթացի նախաձեռնելու հնարավորությունները և պատրաստակամությունը, քանի որ հատկապես գյուղական շատ դպրոցներում նման ծրագրերի իրականացումը կարող է հնարավոր չլինել՝ թույլ տեխնիկական հագեցվածության, ցածր դրամական բավարարման, ինչպես նաև համապատասխան որակավորում ունեցող ուսուցչական կազմի բացակայության պատճառով: Ծրագիրը պարտադիր կերպով պետք է համաձայնեցվի կրթության ոլորտում պետական լիազոր մարմնի, ինչպես նաև դպրոցների տնօրինության հետ, որոնք էլ իրենց լիազորությունների շրջանակում պատասխանատու են ծրագրի իրականացման և մոնիթորինգի համար: Հատուկ ուշադրության են արժանի այն դպրոցահասակ երեխաները, որոնք բնակվելով ռիսկային համայնքներում սոցիալ-տնտեսական կամ այլ պատճառներով

դպրոց չեն հաճախում, քանի որ նրանք առավել վտանգված են: Նման կատեգորիայի շրջանում իրազեկվածության բարձրացման նպատակով կարելի է ապավինել ԱՎԻ թիմերի առավել ինտենսիվ համայնքային համագործակցության ծրագրերին:

## XIV.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

43. Համայնքային կարողությունների ամրապնդումը պետք է հանդիսանա ԱՎԻ ծրագրերի իրականացման անբաժանելի մասը: Այն կարող է ներառել կամավորական ցանցերի ստեղծումը և համայնքային մակարդակում ռիսկերի կառավարման ամրապնդման միջոցները: ԱՎԻ ծրագրերը կարող են ինտեգրվել զարգացման, մաքրման/հետազոտական, հաշմանդամության աջակցության և համայնքային ռիսկերի նվազեցման այլ մեթոդների հետ:

## XV. ԱՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ և ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

44. Համակարգման նպատակը ԱՎԻ իրականացնող կազմակերպությունների և ակա-նային գործողությունների կազմակերպությունների կողմից աշխատանքների փոխլրացումն ու փոխադարձ աջակցությունն ապահովելն է: ԱՎԻ համակարգումը պետք է ապահովի ԱՎԻ ծրագրի շրջափուլի յուրաքանչյուր բաղկացուցչի (գնահատում, պլանավորում, իրականացում, մոնիթորինգ և գործողությունների ու ռազմավարությունների արժեքորոշում) իրականացման համար պատասխանատու բոլոր դերակատարների հաջորդական և արդյունավետ ներգրավվածությունը: ԱՎԻ-ն պետք է համադրվի ականազերծման գործողությունների և օգնության ու զարգացման այլ ծրագրերի հետ, որպեսզի առավել արդյունավետորեն ապահովվի դրա նպատակների (զոհերի թվի կրճատում, ականների սոցիալ-տնտեսական ազդեցության նվազեցում և զարգացման աջակցում) իրականացումը:

45. Առավելագույն արդյունավետության համար ԱՎԻ-ն պետք է համակարգվի ականազերծման ծրագրի շրջանակում, ինչը հնարավորություն է տալիս ապահովել ԱՎԻ ինտեգրումն ականային ծրագրի այլ ոլորտներին: Եթե ականային գործողությունների ծրագրի

համակարգման մեխանիզմ չի գործում, ապա ԱՎԻ բաղադիչների հիման վրա ստեղծվում է ինքնուրույն համակարգման մեխանիզմ:

46. Ականազերծման գործողությունների, ներառյալ ԱՎԻ, ազգային համակարգման ընդհանուր պատասխանատվությունը դրված է ԱԳԱՄ-ի վրա: ԱԳԱՄ-ը սահմանում է ականազերծման գործողությունների ընդհանուր քաղաքականությունը և ռազմավարությունը: Անհրաժեշտության դեպքում այն կարող է համակարգել նաև ականազերծման գործողությունների օպերատիվ միջոցառումները, որը սովորաբար հանդիսանում է ականազերծման գործողությունների կենտրոնի գործառույթը: Ականազերծման գործողությունների կենտրոնն իր վրա դրված առաջադրանքները կարող է իրականացնել իր տարածքային ստորաբաժանումների միջոցով: Ի լրումն ԱԳԱՄ միջոցով ԱՎԻ համակարգմանը, ԱՎԻ կազմակերպությունները պետք է մասնակցեն այլ համակարգման մեխանիզմներին, որոնք կարող են ստեղծվել կառավարության կողմից, ՄԱԿ-ի կամ հասարակական կազմակերպությունների շրջանակներում տարածքային կամ ազգային մակարդակներում:

## XVI. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

47. Մոնիթորինգի նպատակն ԱՎԻ-ի և դրա արդյունքների համապատասխանությունը նախագծի կամ ծրագրի պլանին ապահովելն է: Այն պետք է հիմնված լինի խնդիրների կատարման, ԱՎԻ-ի ազդեցության, հաշվետվողականության և փորձ վրա:

48. Մոնիթորինգի հիմնական խնդիրն է պարզել, թե ինչպես է ԱՎԻ-ն իրականացվում և արդյոք դրա իրականացման պլանը համապատասխանում է տուժած համայնքների կարիքներին:

49. Մոնիթորինգի են ենթակա նշված հարցերը՝

1) ԱՎԻ իրականացման արդյունավետությունը և օգտակարությունը.

2) ԱՎԻ ծրագրերի և նախագծերի ընկալումը ռիսկային համայնքներում.

3) վարքային փոփոխությունները.

4) աշխարհագրական ընդգրկումը.

5) ռիսկի դիմելու պատճառները, նոր վարքային դրսևորումները, վտանգների նկատմամբ հարմարվողականությունը.

6) զոհերը.

7) թիրախային ռիսկային խմբերի կազմավորման փոփոխությունները:

50. Մոնիթորինգը պետք է իրականացվի նախագծային և ծրագրային մակարդակում՝ ներքին կարգով՝ իրականացնող կազմակերպության կողմից, կամ արտաքին կարգով՝ ազգային կամ ՄԱԿ-ի կամ նրանց ներկայացուցչի կողմից:

51. Անկախ համակարգի ձևավորման ձևաչափից՝ այն պետք է ունակ լինի՝

1) վեր հանել համապատասխանության, արդյունավետության, օգտակար գործողության գործակցի, ազդեցության և շարունակականության չափման ցուցիչները.

2) ստեղծել վերը նշված ցուցիչների հիման վրա տեղեկատվության հավաքման համակարգեր.

3) ձևավորել համակարգված կերպով տեղեկատվության հավաքագրման և պահպանման գործընթաց.

4) ապահովել հավաքագրված տեղեկատվությունը, վերլուծությունը և մեկնաբանությունը.

5) համոզվել, որ տեղեկատվությունն օգտագործվում է նախագծի/ծրագրի ամենօրյա կառավարման մեջ .

6) համոզվել, որ ԱՎԻ-ն հիմված է այն տեղեկատվության վրա, որը հավաքագրվել է մոնիթորինգից՝ ապահովելով միջոցառումների համապատասխանությունը վերջնական նպատակներին հասնելուն:

52. ԱՎԻ-ի գնահատումը պետք է պարզի նախագծի կամ ծրագրի ազդեցությունը ականներից մարդկային, սոցիալական կամ տնտեսական վնասների նվազեցման

տեսանկյունից: Գնահատումը չի իրականացվում բացառապես ծրագրային մակարդակով. այն կարող է դիտարկել նաև ԱՎԻ կազմակերպչական մոտեցումների, քաղաքականության, և (կամ) ռազմավարության մոտեցումները:

53. Գնահատումը կարող է տեղի ունենալ նախագծի կամ ծրագրի շրջափուլի տարբեր փուլերում: Ընթացիկ գնահատումները (միջանկյալ վերանայում) նպատակ են հետապնդում իրականացման ընթացքում աջակցել նախագծի կամ ծրագրի զարգացմանը՝ ընդգծելով ձեռքբերումները, հայտնաբերելով հիմնախնդիրները և առաջարկելով լուծումներ: Վերջնական կամ հանրագումարային գնահատումներնը իրականացվում են նախագծի կամ ծրագրի ավարտից հետո (որոշ դեպքերում տարիներ անց) և նպատակ են հետապնդում ուսումնասիրությունների հիման վրա մշակել և զարգացնել երկարաժամկետ զարգացման նոր ծրագրեր:

54. Գնահատման որոշումը կախված է նախագծային/ծրագրային առանձնա-հատկություններից և տարբեր գործոնների ազդեցությունից: Հաշվի են առնվում հետևյալ գործոնները՝

1) նախագծի/ծրագրի երկարաժամկետ կամ կարճաժամկետ նպատակները.

2) մոնիթորինգի ինչպիսի մեթոդներ են կիրառվում (ինչպիսի տվյալներ են հասանելի).

3) արտաքին գնահատման անհրաժեշտությունը.

4) գնահատման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը.

5) գնահատման գործընթացի ժամանակային ազդեցությունը (ծրագրի/նախագծի աշխատակազմի և ԱՎԻ թիրախային շահառուների վրա).

55. ԱՎԻ նախագծի/ծրագրի իրականացման չորս հիմնավորումներն են՝

1) կատարողականի բարելավում.

2) հաշվետվության բարձրացում.

3) շահագրգիռ կողմերի միջև հաղորդակցության բարձրացում.

4) ուսուցման և պատրաստվածության բարելավում.

56. Գնահատման և մոնիթորինգի նշանակությունն իմաստավորվում է արդյունքների հետագա օգտագործմամբ: Ստացված արդյունքները պետք է կազմեն հետագա նախագծերի/ծրագրերի պլանավորման, կազմակերպչական ռազմավարության անբաժան մասնիկը և հնարավորինս լայն տարածվեն շահագրգիռ կողմերի միջև:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ